



## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Փաշինեանը Երկու Արանքի Միջեւ

Վերջին շրջանին զգալիորեն աւելցած են քննադատութիւններն ու դժգոհութիւնները Փաշինեանի կառավարութեան վարած ներքին քաղաքականութեան ու առած որոշ քայլերուն կապակցութեամբ, այս անգամ ոչ թէ ընդդիմադիր ուժերուն կողմէ, այլ յեղափոխութեան աջակից նկատող շրջանակներուն եւ նաեւ ժողովրդային խաւերուն կողմէ:

Այս երեւոյթը աւելի ցայտուն կերպով արտայայտուեցաւ Սահմանադրական Դատարանի վերջին նշանակումներուն առթիւ: Իշխանութիւնները քննադատուեցան նախկին վարչակարգին ծառայած անհատները որպէս ՍԳ դատաւորներ առաջադրուելուն առիթով: Կառավարութեան կողմէ ներկայացուած առաջին թեկնածուի պարագային, ի յայտ եկաւ որ ան Մարտ 1-ի իրադարձութիւններուն առթիւ անարդար վճիռներ արձակած դատաւորի մը որդին է եւ կրնայ օրին մէկը ունենալ շահերու բախում: Կարելի եղաւ այս նշանակումին առաջը առնել, երբ թեկնածուն ինքնակամ հրաժարեցաւ տեսնելէ ետք իր դէմ բարձրացած աղմուկի տարողութիւնը: Սակայն երկրորդը թեկնածուն Երուսաղէմ Խունդկարեանը, որու անունը ներկայացուած էր դատաւորներու ընդհանուր ժողովէն, հաստատուեցաւ Ազգային ժողովին կողմէ, հակառակ որ անոր անցեալը եղած է ոչ այնքան փայլուն: Ան հաստատած էր Քոչարեանի կողմէ «Ա1+» անկախ հեռատեսիլ փակումը, իսկ տարիներ ետք Մարդու Իրաւունքներու Եւրոպական դատարանը այդ որոշումը գտնալով անարդար, պարտադրած էր Հայաստանի կառավարութեան 30 հազար Եւրօ վճարուց հատուցում վճարել «Ա1+»-ի սեփականատիրոջ:

Յատկապէս այս նշանակումը վրդովմունք յառաջացուց շատերու մօտ եւ նոյնիսկ կայ մտավախութիւն որ, Հրայր Թովմասեանը կրնայ դարձեալ ընտրուիլ Սահմանադրական Դատարանի նախագահ:

Ֆէյսպուքեան երկար գրառումով մը վարչապետ Փաշինեան պատասխանեց իշխանութիւններու հասցէին բարեկամ շրջանակներէն եկող մեղադրանքներուն:

«2018 թուականի յեղափոխութիւնից յետոյ հանրային քննարկումների ամենատարածուած խօսույթներից մէկը իշխանութիւնների սխալ քայլերի վերահանումն ու նրան ճիշդ քայլերի մղելու փորձերն են:

Հանրային քննարկումների

## Հայաստանի Մէջ Նշուեցաւ Անկախութեան 29-րդ Տարեդարձը «Մինչեւ 2050 Թուականը Հայաստանի Բնակչութիւնը Հասցնել Առնուագն 5 Միլիոնի», Ըսաւ Վարչապետ Փաշինեան

Հայաստանի անկախութեան 29-ամեակի առթիւ վարչապետ Նիկոլ Փաշինեան, նախագահ՝ Արմէն Սարգսեան, Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան, Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ բարձրաստիճան պաշտօնեաներ այցելած են «Եռաբլուր» գիւտերական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու իրենց կեանքը Հայրենիքի անկախութեան համար զոհաբերած հայորդիներու յիշատակին, հաղորդած են պաշտօնական աղբիւրները:

Վարչապետը ծաղիկներ դրած է սպարապետ Վազգէն Սարգսեանի, Անդրանիկ Օզանեանի շիրիմներուն եւ ծաղիկապակ՝ զոհուած ազատամարտիկներու յիշատակը յաւերժացնող յուշահամալիրին, հաղորդած է պետութեան ղեկավարի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութիւնը:

Պատասխանելով լրագրողներու հարցերուն՝ նախագահ Արմէն Սարգսեան նշած է. - «Երեւան տարի առաջ մեր ժողովուրդը երազանք ունէր՝ դարբերով փայփայած երազանք՝ վերականգնել իր անկախ պետականութիւնը, եւ 29 տարի առաջ այդ երազանքը կատարուեց: Այս ընթացքում ունեցանք ե՛ւ մեծ յաղթանակներ, ե՛ւ դժուարութիւններ, կարծում եմ, բոլոր լաւ եւ վատ դասերը սովորել ենք: Ժամանակն է, որ նորից երազենք, որպէսզի յաջորդ երեսուն տարում կառուցենք աւելի ամուր ու հզօր պետութիւն: Քսանինը տարի առաջ մենք բոլորով հաւատացինք եւ ստացանք այն, ինչ ուզում էինք: Եթէ այսօր էլ հաւատանք, կարգապահ ու կազմակերպուած լինենք, յստակ նպատակ ու ծրագիր ունենանք, ապա կը հասնենք մեր երազանքին»:



Անկախութեան տօնին առթիւ Հայաստանի եւ Արցախի ղեկավարները եւ Վեհափառը կ'այցելեն Եռաբլուր

Անկախութեան տօնի առիթով ՀՀ Զինուած ուժերու ռազմաօդա-

չին ուժերը տօնական թռիչք կատարած են Երեւանի երկինքը: Վարչապետ Նիկոլ Փաշինեան թռիչքին հետեւած է «Յաղթանակ» զբօսայգիի բարձունքէն: Վարչապետը նաեւ ծաղիկներ խոնարհած է «Յաղթանակ» զբօսայգիի Ամար կրակին մօտ, ըսուած է պետութեան ղեկավարի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու

## Տեղի Ունեցաւ ՍԳԴԿ Արեւմտեան Ամերիկայի Կառոյցներու Ընդլայնում Գաւառը

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի նախաձեռնութեամբ, Հինգշաբթի Սեպտեմբեր 17-ին, 2020, Կուսակցութեան Փաստփնայի կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ շրջանի կուսակցական մասնաճիւղերու, ինչպէս նաեւ մեր հովանաւորութեան տակ գործող կառույցներու՝ Հայ Ամերիկեան Խորհուրդի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան, Հայ Մարմնամարզական Միութեան, «Կայծ» Երիտասարդական Միութեան եւ «Մասիս» շաբաթաթերթի հերթական հաւաքը:

Սոցիալ Դեմոկրատիկ կուսակցական հանդիպումի ընթացքին Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեան համապարփակ գեկուցումով հանդէս գալով, մասնաւորաբար անդրադարձաւ քորոնա ժահրի պատճառով յառաջացած համընդհանուր ճգնաժամային վիճակին պատճառաւ աշխատանքային պայմաններու փոփոխութեան եւ անոնց յարմարուելու կարեւորութեան, որպէսզի կարելի ըլլայ շարունակել միաւորներու գործունէութիւնը տարբեր բնագաւառներէն



ներս: Անդրադարձ եղաւ համավարակի սկզբնական շրջանին մեր օրկանի դիմագրաւած դժուարութիւններուն, որոնց պատճառաւ թերթի ցրուածը կատարուեցաւ էլեկտրոնային փոստով: Այժմ, յաղթահարելէ ետք այդ դժուարութիւնները «Մասիս» վերսկսաւ հրատարակուիլ տպագիր ձեւով:

Համաճարակի տագնապալի այս օրերուն ամենէն ծանր պարտականութիւնը ինկած էր Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան ուսերուն եւ ան, ոչ միայն շարունակեց կրթանպաստ հայթայթել ուսումնաստենչ հայ ու-

## Հրանդ Տինքի Անուան Մրցանակին Արժանացան Օսման Քաւալան եւ Մուգն Հասանը

Հրանդ Տինքի անուան միջազգային մրցանակի այս տարուայ դափնեկիրը թուրք նշանաւոր հասարակական գործիչ՝ Օսման Քաւալան է:

Աւելի քան հազար օր ճաղերուն ետեւը գտնուող Քաւալան Միլիվրի բանտէն յղած իր ուղերձին մէջ նշած է. - «Կը հաւատամ, որ հասարակութեան տարբեր հատուածներու եւ տարբեր երկիրներու մէջ ապրող մարդոց միջեւ առկայ նախապաշարումները հնարաւոր է յաղթահարել մտածելով, խօսելով եւ լսելով միջոցով»:

Իր խօսքին մէջ Քաւալան յիշած է նաեւ բանտ գտնուող քուրտ քաղաքական գործիչ՝ Սեւաթ Երմէնի Տեմիրթաշին, լրագրող, հրապարակախօս՝ Ահմետ Ալթինին, բանտարկուած միւս լրագրողներուն եւ հացադուլի հետեւանքով վերջերս մահացած փաստաբան՝ Էպրու Թիմթիքին:

**ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**Ալիեւը Գիտի, Թէ Ով Է Լինելու Առաջին Ջոհր. Նա Օգնութիւն Է Յայցում**

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Անհոգ եղէք, մենք յաղթել ենք ու միշտ յաղթող ենք լինելու՝ Եռաբլուրում լրագրողների հետ ճեպագրուցում չաչտաչարել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տոնոյեանը, երբ լրագրողները հարցրել են օրերս Տաւուշի ուղղութեամբ ատրպէյճանական նոր սադրանքին պատասխան տալու մասին: Դաւիթ Տոնոյեանը խորհրդարանում յայտարարել էր, որ Ատրպէյճանը մտահոգ է, քանի որ գիտի՝ իրականացուելու են համապատասխան գործողութիւններ:

Ատրպէյճանը վերջին օրերին ու շաբաթներին վարում է գերինտենսիւ քարոզչութիւն աչն շեշտադրումով, թէ հայկական կողմը պատրաստուում է պատերազմի, պատրաստուում է սադրանքի: Պաքուի այդ քարոզչութիւնը Հայաստանում ընկալուում է որպէս պատերազմի նախապատրաստութիւն, որի համար պատասխանատուութիւնն Ատրպէյճանը փորձում է դնել Հայաստանի վրայ: Արդեօք այստեղ է խնդիրը՝ իհարկէ բաւականին բարդ է ասել, քանի որ դրա համար պէտք է մտնել Ալիեւի թէ՛ գլխի մէջ՝ հասկանալու համար, թէ ինչ է կատարում այնտեղ, թէ՛ նաեւ նրա դրուութեան:

Բանն այն է, որ Ատրպէյճանի նախագահը տապալուել է հիմնաւորապէս՝ իր քաղաքական փրկիսփայտութեան առումով:

Նա այլեւս չունի ժամանակ եւ կա՛մ պէտք է սկսի պատերազմ, կա՛մ պէտք է տապալուի՝ ատրպէյճանական հանրութեանը չկարողանալով բացատրել, թէ, ի վերջոյ,

ինչու է ի դնում յաղթելու, եթէ այդքան վատահ է իր բանակի վրայ: Պատերազմ սկսելու համար Ալիեւը պէտք է ունենայ ոչ թէ 100, այլ 500 կամ 1000 տոկոս համոզուածութիւն, որ այն աւարտելու է նախ՝ արագ, եւ յետոյ՝ յաղթանակով: Ալիեւն այդպիսի համոզուածութիւն կարող է ունենալ միայն մի դէպքում՝ եթէ ունի նոյնքան երաշխիք, որ ուժային կեդրոնները, որոնք հետաքրքրուած են ռեզիոնալ անվտանգութեամբ, ոչ միայն չեն խանգարելու իրեն, այլ նաեւ նպաստելու են այդ յաղթանակին:

Այլ կերպ ասած՝ Ատրպէյճանի համար չկայ եւ տեսանելի ապագայում չի լինելու պատերազմ սկսելու անհրաժեշտ նախադրեալ: Հետեւաբար Ալիեւը կարող է գնալ այդ քայլին մի դէպքում՝ եթէ նրան ստիպեն: Ըստ այդմ՝ եթէ նրան ստիպեն գնալ ռազմական մեծ սադրանքի, ուրեմն անկասկած է, որ դա լինելու է այն փոսը, որում առաջինը յայտնուելու է Ալիեւը, յետոյ իհարկէ կարող է յայտնուել ամբողջ ռեզիոնը: Ահա թէ ինչու է Ատրպէյճանի նախագահի պաշտօնը զբաղեցնող ի՛նչամ Ալիեւը ինտենսիւացրել քարոզը, թէ Հայաստանը պատրաստուում է պատերազմի:

Ալիեւն այդպիսով փորձում է կանխել պատերազմի պարտադրանքը, որ կարող է յայտնուել իր վրայ, եւ որի առաջին զոհն էլ դառնալու է հենց ինքը: Ալիեւը պատերազմի մասին ինտենսիւ քարոզչական աղմուկով փորձում է օգնութիւն հայցել ռազմական ճանապարհով իր հարցը լուծելու դէմ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

**Նախկինները Մի Յաջողութիւն Այնուամենայնիւ Արժանագրեցին**

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

Այս օրերին հասարակական-քաղաքական շրջանակներում, լրատուամիջոցների էջերում ու շատկապէս սոցիալքերում ընթացող «բանավէճերի» մակարդակն իսկապէս մտահոգիչ է: Փոխադարձ վիրաւորանքներն ու անապացոյց մեղադրանքներն իջեցուել են փողոցային մակարդակի, ու տպաւորութիւնն այն է, որ այլ տարբերակ չկայ՝ յաջող քայլը ձեռնամարտն է: Բայց ամենահաւուրը նոյնիսկ ոչ թէ այս փողոցային լեզուակուռի մակարդակն է, այլ այն, թէ ինչ վիթխարի անդունդ կայ այդ «քաղաքական բանավէճերի» եւ պետութեանն ու հասարակութեանը իսկապէս յուզող խնդիրների միջեւ:

Կորոնավիրուսային համավարակի վերջը չի երեւում, ինչպէս ամբողջ աշխարհը, այնպէս էլ Հայաստանը սոցիալ-տնտեսական շատ բարդ վիճակում է եւ ելքեր է փնտռում՝ փորձելով չարմարուել նոր իրողութիւններին, մարդկանց համար իրենց ամէնօրեայ կարիքները հոգալը բարդացել է, էլ ակնյի բարդացել է պետութիւնների գործը՝ իրենց քաղաքացիների առջեւ ստանձնած պարտաւորութիւնները կատարելու հարցում, եւ այս իրավիճակում մեր քաղաքական «էլիտան» բանուգործը թողած՝ միմիանց մեղադրում է բոլոր մահացու մեղքերի մէջ:

Սա, իհարկէ, առաջին հերթին ՀՀ նախկին իշխանութիւնների հետեւողական գործունէութեան արդիւնքն է: Այո, նրանք յաջողութեան հասան եւ այնուամենայնիւ կարողացան իշխանութիւններին ներքաշել ցածրամակարդակ լեզուակուռի մէջ ու դրանով իսկ հանրութեանը ցոյց տալ, թէ տեսէք՝ մենք նոյն հարթութեան վրայ ենք: Մէկուկէս-երկու տարի առաջ որեւէ մէկը կարող էր պատկերացնել, որ Ռոբերտ Քոչարեանն, օրինակ, ոչ միայն կը համարձակուի հրապարակային ելոյթ ունենալ, այլեւ իշխանութիւններին կը մեղադրի կոռուպցիայի մէջ, Գագիկ Ծառուկեանը բարոյախրատական ելոյթներ կ'ունենայ, Սերժ Սարգսեանի թիմակիցները չեղափոխական իշխանութիւններին կը սպառնան ֆիզիքական հաշուեհարգարով, եւ այլն: Իսկ հիմա այդ ամէնը ոչ միայն իրողութիւն է, այլեւ մարդիկ կան, ովքեր լրջօրէն հետեւում են այդ «քաղաքական բանավէճերին»:

Ինչո՞ւ իշխանութիւնները չպէտք է մտնէին այդ լեզուակուռի մէջ: Որովհետեւ երբ նախկիններն են ձգտում դրան, դա հասկանալի է՝ նրանք ուրիշ ոչինչ անել չեն կարող եւ ի վիճակի են միայն հայցոյել իշխանութիւններին (ոնց էլ լինի՝ էլի հրէական յայտնի անեկդոտի պէս «նստուածքը կը մնայ»), մինչդեռ իշխանութիւնները պարտաւոր են ակնյի պատասխանատու լինել սեփական խօսքի նկատմամբ, եւ որ ամենակարեւորն է, խօսելու փոխարէն աշխատել:

Հասկանալի է, որ կորոնավարակը շատ ծանր հարուած է հասցրել երկրի տնտեսութեանը, հասկանալի է, որ այս իրավիճակում փայլուն ցուցանիշներ ակնյի չհնարաւոր չէ (ինչպէս հնարաւոր չէր, ասենք, ՍՍՀՄ փլուզման եւ դրան յաջորդած պատերազմի տարիներին), բայց այդ նոյն կորոնա-

վարակը պիտի իշխանութիւնների համար ոչ թէ «մեղմացուցիչ հանգամանք» լինի, այլ կրկնապատիկ եռանդով ու արդիւնաւետութեամբ աշխատելու խթան:

Պարզ է, որ միշտ էլ կը գտնուեն մարդիկ, ովքեր կը յայտարարեն, թէ Քոչարեանի օրօք ակնյի լաւ էր, որովհետեւ խաղողն ակնյի բարձր գնով էին մթերում, կամ Սերժ Սարգսեանի ժամանակ ակնյի լաւ էր, որովհետեւ փողոցում առանց դիմակ քայլելու համար չէին տուգանուած: Ընդ որում՝ այդ մարդկանց մեղադրել չի կարելի, այդպէս մտածելը նրանց իրաւունքն է եւ եթէ հանրային գիտակցութիւնն այդ մակարդակի վրայ է, ուրեմն էլի իշխանութիւններն են մեղաւոր, որովհետեւ չեն կարողացել մարդկանց ներկայացնել իրական խնդիրները կամ ներկայացրել են ոչ այնքան համոզիչ:

Իսկ սա նշանակում է, որ իշխանութիւնների երկիւստութիւնը պիտի ոչ թէ նախկինների հետ լինի, այլ հասարակութեան: Այո, դա ակնյի բարդ է, որովհետեւ մարդիկ, ճիշտ թէ սխալ, բայց կոնկրետ հարցեր են բարձրացնում, եւ այդ երկիւստութիւնը յաճախ կարող է տհաճ լինել իշխանութիւնների համար, մինչդեռ նախկինների հետ լեզուակուռ ճշտ է՝ անցեալից մի երկու դրուագ ես չի չեցնում, եւ վերջ: Բայց հասարակութեանը պէտք է ոչ թէ նախկինների «պորտը տեղը դնող», այլ իր հետ երկիւստող ու անզամ բանավիճող իշխանութիւն: Եւ սա ամենակարեւորն է:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**Մօտակայ 3 Տարուայ Սիքուելը**

ԱՐԱՍ ԱԲՐԱՄՍԵԱՆ

Անգլերէն «sequel» բառն առաջացել է լատինական «sequella»-ից եւ բառացիօրէն նշանակում է «չարունակութիւն»: Այդ հասկացութիւնն առաւել կիրառելի է հեռուստասերիալների դէպքում:

Պատկերացրէք, որ սերիալը մէկ-երկու սեզոնի ընթացքում արդէն սպառել է իր սիւժետային հիմնական գծերը, հերոսներն էլ ասպրել են զարգացման անհրաժեշտ շրջափուլը (յաճախ այդպէս է լինում, երբ այդ առաջին սեզոնների սիւժէի հիմքում գրական մի գործ է), բայց պրոդիւսերները զգում են, որ հեռուստադիտողների հետաքրքրութիւնն ամբողջութեամբ չի սպառուել, սերիալն ինչ-որ չափով կը պահպանի իր վարկանիշը եւ, հետեւաբար, կը կարողանայ ներգրաւել գովազդային որոշակի միջոցներ: Այդ նկատաւորումներից ելնելով՝ նկարահանում է այդ սերիալի օրգանական շարունակութիւնը հանդիսացող, կամ, առնուազն, մի քանի հերոսների ընդգրկող, մէկ այլ սերիալ, որը ձգում է եւս մի քանի սեզոն, մինչեւ արտադրանքը կը կորցնի իր կոմերցիոն նշանակութիւնը: Որպէս կանոն՝ շարունակութիւնը պակաս հետաքրքրի է լինում, քան, այսպէս ասած, «հիմնական մասը»:

Նման ձեւով «2018 յեղափոխութիւն» սերիալի հիմնական մասն արդէն աւարտուել է: «Սաչիկի 50/

50», «Մանուէլի տուշոնկա», «Քոչարեանի դատավարութիւն» սիւժետային գծերն այլեւս զարգանալու ներուժ չունեն, որովհետեւ կորցրել են իրենց հետաքրքրութիւնը հանդիսատեսի աչքերում: Մի քիտուելում, իհարկէ, հնարաւոր են «Սերժի դատավարութիւն» կամ «Հրաչրի սանիկի գործ» ենթասիւժետները, բայց ընկալման թարմութեան տեսակէտից դրանք չեն մրցի այն յուզիչ իրադարձութիւնների հետ, որոնք տեղի ունեցան Երկու տարի առաջ:

Հասարակութիւնը վերադառնում է իր սովորական կրաւորական, ապատիկ, կ'ասէի անգամ՝ փնթփնթան վիճակի մէջ, եւ այլ կերպ չէր էլ կարող լինել. թէ՛ չեղափոխութեան եւ թէ՛ լճացման շարունակութեան դէպքում հնարաւոր չէ, որ մարդկանց սոցիալական վիճակը բարելաւուէր այնքան, որ նրանք գո՛հ մնան որեւէ կառավարութիւնից: Իսկ «բարելաւման» թուերն ու տոկոսները, որ 30 տարի շարունակ հնչեցուում են բոլոր կառավարութիւնների կողմից, քաղաքացիների վստահութիւնը չեն վայելում:

Քաղաքական ոլորտում սիքուելի հիմնական սիւժետները յայտնի են: ՀՀԿ-ականներն ու քոչարեանականները շարունակելու են ապրել իշխանութեան դեկին վերադառնալու անիրականանալի երազանքներով: ԲՀԿ-ն շարունա-



**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՏՍԱԹԵՐԹ՝  
ՍՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՇՎԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍՐԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արման Պապաճանեանի Գլխավորութեամբ Ստեղծուած Է «Յանուն Հանրապետութեան» Կուսակցութիւնը

Հայաստանի քաղաքական դաշտ մուտք գործեց նոր միաւոր. Սեպտեմբեր 21-ին հիմնադրուեցաւ «Յանուն Հանրապետութեան» կուսակցութիւնը:

Կուսակցութեան հիմնադիր անդամներէն, Ազգային ժողովի անկախ պատգամաւոր՝ Արման Պապաճանեան յայտարարեց, որ ազատական գաղափարախօսութեամբ իրենց կուսակցութիւնը կու գայ քաղաքական դաշտ յեղափոխական օրակարգը պաշտպանելու համար.

- «Մեր քաղաքական դաշտն այսօր էլ գործում է նախկինից ժառանգած կարծրացած կաղապարներով, քաղաքական բանավէճում տիրապետում են ոչ թէ գաղափարներն ու հայեցակարգերը, այլ հայհոյանքն ու վիրաւորանքը: Մեր յեղափոխութիւնը դեռեւս խոցելի է ու փրկուելու: Հետեւաբար երկրի ճակատագրով մտահոգ քաղաքական համակարգի, այո, հենց քաղաքական համակարգի եւ ոչ միայն իշխանութիւններին խնդիրը պէտք է լինի յեղափոխութեան ու նրա արժէքների պաշտպանութիւնը:

«Յանուն Հանրապետութեան, ժողովրդավարութեան պաշտպանների դաշինք» կուսակցութիւնը գալիս է անշրջելի դարձնելու յեղափոխութեան ընթացքը: Մենք գալիս ենք ապացուցելու, որ սին են բոլոր մարզինալ լուսանցքային խմբերի յոյսերը, թէ Նիկոլ Փաշինեանին չէզոքացնելով որեւէ մէկին կը յաջողուի կասեցնել յեղափոխութեան ընթացքը»:

Նորաստեղծ այս կուսակցութեան յայտարարած են, որ հրապարակ կու գան ահաբեկչական եւ գէնքի միջոցով քաղաքական խնդիրներ լուծելու հնարաւորութիւնն իսկ ի սպառ բացառելու համար: Մինչեւ 2018 թուականը, լրատուամիջոցներու ղեկավարութեամբ զբաղող Արման Պապաճանեան կը



Ազգային ժողովի անկախ պատգամաւոր՝ Արման Պապաճանեան

յիշեցնէ 1999 թուականի Հոկտեմբեր 27-ը եւ 2008 թուականի Մարտ 1-ը. - «Հոկտեմբեր 27-ն ու Մարտի 1-ը Հայաստանի նորագոյն պատմութեան ամենաողբերգական իրադարձութիւններն են: Կազմակերպուած յանցագործութիւններ, որոնցով սկիզբ դրուեց ապա շարունակուեց պետութեան ու իշխանութեան գաւթումը: Պետութեան բռնազաւթման շրջանակներում հետապնդուել են հարիւրաւոր քաղաքական գործիչներ, ունեցրիւ են բռնաճնշուել են հարիւրաւոր մեր քաղաքացիներ, կայացուել են տասնեակ հարիւրաւոր ապօրինի դատական վճիռներ: Այս հակապետական աքթերի հեղինակներն ու կազմակերպիչները մինչ օրս պատասխանատուութեան չեն ենթարկուել, քանի որ չի տրուել անցեալի համապարփակ իրաւաքաղաքական գնահատական, ինչը պարտաւոր էր եւ այսօր էլ պարտաւոր է անել յեղափոխական իշխանութիւնը»:

Դատարանը Բաւարարած Է Միքայէլ Մինասեանի Կալանաւորումը

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը բաւարարած է Հայաստանի երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեանի փեսայ, Սուրբ Աթոռի մօտ Հայաստանի նախկին դեսպան Միքայէլ Մինասեանը կալանաւորելու Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) միջնորդութիւնը:

Գլխավոր դատախազութեանէն «Ազատութիւն»-ին փոխանցեցին, որ ընդունուած մօտեցում է, երբ դատարանը կալանաւորման որոշում կը կայացնէ, սակայն մեղադրեալը հետախուզման մէջ կ'ըլլայ:

ՊԵԿ քննչական վարչութեան կողմէ քննուող գործով, Մինասեան մեղադրուած է ապօրինի հարստացման, յայտարարագրով կեղծ տուեալներ ներկայացնելու եւ յանցաւոր ճանապարհով ստացուած գոյքը օրինականացնելու մէջ: Սերժ Սարգսեանի փեսան հետախուզման մէջ է:

Ըստ ՊԵԿ-ի՝ քննութիւնը պարզած է, որ Սուրբ Աթոռի մօտ Հայաստանի նախկին դեսպանը՝ 2012-2018 թուականներուն կասկածելի աղբիւրներէ ստացած խոչոր ֆինանսական միջոցներով, բողարկուած եղանակով, Սկովտիոյ մէջ հաշուառուած օֆշորային-հեռափնեայ «Ուոլթիքս Էքսփրես Էլ



Սուրբ Աթոռի մօտ Հայաստանի նախկին դեսպան Միքայէլ Մինասեան

Փի» կազմակերպութեան միջոցով եւ ապա իր մտերիներէն՝ Ռոզա Ստեփանեանի միջոցով, վերջինիս օժանդակութեամբ հանդիսացած է «Սփայք» ընկերութեան 49 տոկոս բաժնեմասի փաստացի բաժնետէրը, սակայն այդ մասին ոչինչ նշած է իր յայտարարագրութիւններուն մէջ:

Յուշիսին Երեւանի ընդհանուր իրաւասութեան առաջին ատենի դատարանը երկրորդ անգամ մերժած էր Պետական եկամուտներու կոմիտէի միջնորդութիւնը:

ԱԱԾ Տնօրէն. «Տոսիէ»-ի Հրապարակման Իրաւական Ընթացք Պիտի Տանք

Ազգային անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) քրէտիրական գնահատական պիտի տայ Հայաստանի պետական համակարգին մէջ գործող ռուսական գործակալներու մասին «Տոսիէ» կեդրոնի՝ նախօրէին հրապարակած հետաքննութեան, յայտարարեց ԱԱԾ տնօրէն Արգիշտի Քեարամեանը:

«Այդ հրապարակումը դիտարկում ենք որպէս յանցագործութեան մասին հաղորդում եւ համապատասխան իրաւական ընթացք ենք տալիս», - ըսաւ ան: Քրէտիրական գործ յարուցուած է, թէ՞ ոչ, ԱԱԾ տնօրէնը բացասական պատասխան տուաւ. - «Այս պահին ռուսամասիւրուում է»: Քեարամեան անպատասխան թողեց «Ազատութիւն»-ի հարցը, թէ արդեօք Ազգային անվտանգութեան ծառայութեան մէջ մինչ հետաքննութիւնը որեւէ տեղեկութիւն ունեցած են պետական համակարգի մէջ գործող ռուսական գործակալներու մասին:

«Տոսիէ» կեդրոնի հետաքննութեան համաձայն՝ Հայաստանի գրեթէ բոլոր պետական կառույցներէն, ինչպէս նաեւ հասարակական կազմակերպութիւններէն ներս կան ռուսական գործակալներ: Հետաքննութեան մէջ իշխատակուած են նաեւ Հայաստանի երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) ղեկավար՝ Գագիկ Ծառուկեանի, ինչպէս նաեւ ԱԱԾ նախկին ղեկավարներու անունները: Հրապարակման մէջ ըսուած է, որ Ռուսաստանի բարեկուս-գործակալները քողարկուելու ու բացառուելու վախ չունին, քանի որ Հայաստանի ազգային անվտանգ-



ԱԱԾ տնօրէն Արգիշտի Քեարամեան

գութեան ծառայութիւնը վաղուց յայտնի է որպէս ռուսականի՝ Լիւպլեան քայի մասնաճիւղ:

Շուրջ 4 ամիս ԱԱԾ-ը ղեկավարող՝ Արգիշտի Քեարամեան, անդրադարձաւ նաեւ ԱԱԾ-ի նախկին տնօրէն Արթուր Վանեցեանի այն յայտարարութեան, թէ իր նշանակումը Ազգային անվտանգութեան համար իրական սպառնալիք է: Ի դէպ, «Տոսիէ»-ի հետաքննութեան մէջ Վանեցեանի անունը չօղորդուած էր որպէս Մոսկուայի ազդեցիկ ռուսաստանցի գործարարներու հետ յաճախակի հանդիպող անձ. - «Արթուր Վանեցեան առաջին հերթին պէտք է մտածէ այն հարցի շուրջ, որ իր՝ ԱԱԾ տնօրէն եղած ժամանակահատուածում Ազգային անվտանգութեան ծառայութեան, Յատուկ քննչական ծառայութեան եւ վարչապետի հեռախօսագրոյցները գաղտնալսած են»:

ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ «Հայրենիքը» Հոկտեմբեր 8-ին Հանրահաւաքի Կը Հրաւիրեն

Գագիկ Ծառուկեանի ղեկավարած «Բարգաւաճ Հայաստանը», ԱԱԾ-ի նախկին տնօրէն Արթուր Վանեցեանի գլխավորած «Հայրենիք» կուսակցութիւնն ու Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Հոկտեմբեր 8-ին Ազատութեան հրապարակին վրայ համապետական հանրահաւաքի հրաւիրած են: Սեպտեմբեր 22-ին տարածուած հաղորդագրութեան մէջ 3 քաղաքական ուժերը նշած են. «Անցած աւելի քան երկու տարիների ընթացքում հանրութեան սպասելիքները չեն արդարացել: Իշխանութիւնը ձախողել է ամէնուրեք: Վտանգուած է երկրի զարգացման հեռանկարը»: Հետեւաբար, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ «Հայրենիքը», «գնահատելով երկրում ստեղծուած իրավիճակը եւ անխուսափելի համարելով նոր որակի եւ ազգային իշխանութեան ձեւաւորման հրամայականը, հրաւիրում են համապետական հանրահաւաք»:

Թէ արդեօք հանրահաւաքին եռեակը պիտի բարձրացնէ վարչապետի հրաժարականի կամ ամբողջական իշխանափոխութեան հարցը, քաղաքական ուժերը չեն մանրամասնել: Այսօր խորհրդարան-

նական ձեւագրոյցներու ընթացքին ԲՀԿ-ի պատգամաւոր, Գագիկ Ծառուկեանի խօսնակ՝ Իվեթա Տօնոյեանը խոստացաւ հանրահաւաքի օրակարգի մանրամասնութիւնները յայտնել առաջիկային. - «Այս պահին մենք փաստը արձանագրում ենք, որ կայ հանրային մեծ դժգոհութիւն, եւ այս երեք քաղաքական ուժերը հնարաւորութիւն են ընձեռում այդ ձայնը լսելի դարձնելու համար»:

«Իմ ֆայլ»-էն կը կասկածին, թէ նորաստեղծ եռեակը կը յաջողի հանրային լուրջ շարժ ապահովել: Ինչպէս իմ քայլական Ռուբէն Ռուբինեանը նշեց, չի կարծեր, թէ հանրութեան շրջանակին մէջ լուրջ դժգոհութիւններ կան. - «Ձեմ կարծում, որ նոյնիսկ եթէ այդպիսի դժգոհութիւն լինէր ենթադրաբար, Ձեր նշած ուժերն էին, որ պիտի որեւէ մէկին զօրաշարժի ենթարկէին: Կարծում եմ՝ այդ 3 ուժերը չեն կարող եւ երբեւից չեն կարողանալու Հայաստանում որեւէ լայն աշակցութիւն հաւաքել, եւ դրա պատճառներն իրենք կարող են փնտռել իրենց անցելու, ներկայում եւ այլ տեղերում»:

ՊԵԿ-ը լրացուցած էր մեղադրանքը եւ աւելցուցած «Սփայքայի» դրուագը, ապա երկրորդ անգամ դիմած

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարան, որ բաւարարած է ՊԵԿ-ի միջնորդութիւնը:

**ԼՈՒՐԵՐ**

**Նիկոլ Փաշինեան Ելոյթ Ունեցած է ՄԱԿ-ի 75-Ամեակի Նստաշրջանին Առթիւ**



Միավորված ազգերի կազմակերպության 75-րդ տարելարնը մենք նշում ենք մարդկության համար շատ առումներով դժվար ժամանակներում

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Միավորված Ազգերու կազմակերպութեան 75-րդ տարեդարձին հանդէս եկած է ելոյթով, որու տեսանիւթը ինչպէս միւս երկիրներու առաջնորդներունը, հրապարակուած է ՄԱԿ-ի պաշտօնական կայքով եւ Եութուպեան ալիքով:

«ՄԱԿ-ի 75-րդ տարեդարձը կը նշուի մարդկութեան համար շատ առումներով դժուար ժամանակներուն, ինչ որ իր ազդեցութիւնը կը ձգէ միջազգային յարաբերութիւններու եւ այն ընդհանուր ինսթիթուիթներու գործունէութեան վրայ, որոնք կ'ուղղորդեն միջազգային համագործակցութիւնը՝ հիմքեր ստեղծելով ընդհանուր նպատակներու կատարման համար», - յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Պետութիւններ ինքնիշխանութիւնը, անկախ դրանց չափից եւ հզօրութիւնից, աւելի լաւ է պահպանուած, եւ ազգային շահերն աւելի լաւ են սպասարկուած ներկայիս համակարգում, երբ կայ յարգանք միջազգային իրաւունքի, այդ թուում՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան նկատմամբ», - շեշտած է Փաշինեան:

«Միավորված Ազգերի կազմակերպութիւնը կոչուած է փարատելու միջազգային յարաբերութիւններում մշտապէս առկայ երկուութիւնը, որն արտայայտուած է պետութիւնների բնական եսասիրութեան եւ համագործակցութեան հաւասարապէս բնական անհրաժեշտութեան մէջ:

«Միավորված Ազգերի կազմակերպութիւնն ապացուցեց իր կենսունակութիւնը՝ այս երկու թուացեալ անհամատեղելի հասկացութիւնները փոխակերպելով ինքնիշխան պետութիւնների արդիւնաւէտ համաշխարհային համակարգի՝ միավորելով դրանք ընդհանուր արժէքներով եւ սկզբունքներով, կիսելով ապագայի ընդհանուր տեսլականը եւ ունենալով համագործակցութեան ընդհանուր ինսթիթուիթներ կառուցելու վճռականութիւն:

«Արդիւնաւէտօրէն իրականացնելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը՝ ՄԱԿ-ը ծննդեան վկայականներ է տուել կամ օգնել է վերականգնել աւելի քան 100 ազ-

գերի ինքնիշխանութիւնը: Շատ ժողովուրդներ, ինչպէս երբեք մարդկութեան պատմութեան մէջ, հնարաւորութիւն ստացան իրենց մասնակցութիւնը բերել համաշխարհային գործերին եւ իրացնել իրենց զարգացման ներուժը՝ ընթանալով բարգաւաճման ուղով», - յայտարարած է Հայաստանի վարչապետը:

«Ենթադրութիւնը, թէ այդ գործընթացը աւարտած է Սառ պատերազմի աւարտով, միայն պատրանք է, ընդգծած է Նիկոլ Փաշինեան՝ շարունակելով. - «Ինքնորոշման իրաւունքի մերժումը կարող է միմիայն յանգեցնել բռնաճնշման եւ նոր բռնութիւններին: Դա խորապէս կը հակասէր Միավորված ազգերի կազմակերպութեան հիմնարար արժէքներին եւ միջազգային աշխարհակարգի պատմական եղափոխութեան զարգացման: Վերջին երկու տասնամեակների ընթացքում մի շարք պետութիւնների ի յայտ գալն այդ միտման լաւագոյն վկայութիւնն է»:

«ՄԱԿ-ի համակարգի համար մէկ այլ հիմնարար արժէք է միջազգային յարաբերութիւններում սպառնալիքի կամ ուժի կիրառման արգելումը, որը համաշխարհային խղճողութեան եւ անվտանգութեան պահպանման յենասիւնն է եւ կայուն զարգացման գլխաւոր նախապայմանը», - նաեւ շեշտած է Հայաստանի ղեկավարը:

«Համաշխարհային մարտահրաւէրները երբեմն սասանում են միջազգային համերաշխութեան եւ անհատական շահի միջեւ առկայ հաւասարակշռութիւնը, երկմտութիւն եւ նոյնիսկ հիասթափութիւն են առաջացնում միջազգային հաստատութիւնների նկատմամբ, ինչի մասին են նաեւ վկայում Covid-19 համաճարակով պայմանաւորուած իրավիճակը եւ դրա ծանր ընկերատնտեսական հետեւանքները», - նշած է Փաշինեան:

«ՄԱԿ-ը սոսկ իր 193 անդամների հանրագումարը չէ: Այն աւելին է, քան ազգային շահերը ներկայացնելու ընդհանուր հարթակ: Այն նաեւ շրջանակ է ընդհանուր հետաքրքրութիւններ ձեւաւորելու, միմեանց լսելու եւ իւրաքանչիւրի ձայնին ահաջալուր լինելու համար», եզրակացուցած է Նիկոլ Փաշինեան:

**Դաւիթ Տօնոյեան. «Տապալման Առումով Ալիւը Երեւի Թէ Ինքն Իր Մասին Կը Խօսի»**



Հայաստանի պաշտպանութեան նախարար՝ Դաւիթ Տօնոյեան

Արձագանգելով Ատրպէյճանի նախագահի յայտարարութեան, թէ «դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցով բանակցութիւններու տապալման մեղաւորը Հայաստանի ղեկավարութիւնն է», Հայաստանի պաշտպանութեան նախարար՝ Դաւիթ Տօնոյեան ըսաւ, որ իհրամ Ալիւը բանակցութիւնները տապալելու գործով ինքզինք մեղադրելու փոխարէն մեղադրած է հայկական կողմը. - «Երեւի թէ ինքն իր մասին է խօսում տապալման առումով»:

«Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ ուժի տեսանկիւնից եւ իրենց համար անյաղթահարելի պահանջներ դնելը բանակցային գործընթացից առաջ, անընդունելի է», - աւելցուց Տօնոյեան:

Սեպտեմբեր 19-ին, տեղական հեռուստաընկերութիւններուն տուած հարցազրոյցի ընթացքին, Ատրպէյճանի նախագահը նաեւ բացասական գնահատած էր Ղարաբաղի հարցով բանակցութիւններու ներկայ վիճակը. - «Ես ըսած եմ, որ մենք չենք մասնակցիր բանակցութիւններուն յանուն տեսանկիւնութեան: Այդ չի նշանակեր, որ մենք կը հրաժարինք բանակցութիւններէ, այդ կը նշանակէ, որ մենք չենք ցանկար դառնալ Հայաստանի խորամանկ քաղաքականութեան մասնակիցը»:

«Եթէ Հայաստանի վարչապետը կը կարծէ, որ Ղարաբաղը Հայաստան է, այդ պարագային ինչ խաղաղ համաձայնագիրի մասին կարելի է խօսիլ», - նաեւ յայտարարած է Ալիւը:

**«Կովկաս-2020» Զօրավարժութիւններուն Սեշ Ներգրաւուած Են Հայաստանի Եւ Ռուսաստանի Մարտական Ուղղաթիռները**



Հայաստանի ու Ռուսաստանի ղեսանտային օդային զրոհային եւ հարուածային ուղղաթիռները «Ալազեազ» փորձադաշտին մէջ աւերներ պիտի հասցնեն Հայաստանի պայմանական հակառակորդի ռազմական սպառազինութեան շարանին եւ կառուցներուն, պիտի ապահովեն օդային տեղափոխումն ու իջեցումը եւ աջակցին յարձակման անցած ուժերուն:

Զօրավարժութիւններու ծրագիրին մասին լրագրողներուն ըսած են Ռուսաստանի պաշտպանութեան նախարարութեանէն՝ Երկուշաբթի կայացած մամուլի ասուլիսի ընթացքին:

Զօրավարժութիւններու այս փուլին ներգրաւուած է Հայաստանի ու Ռուսաստանի 20 մարտական ուղղաթիռ, 1,5 հազար զինծառայող, մօտաւորապէս 300 միւս ուղղաթիռ ռազմական գրահ, անոնց կարգին՝ երկու երկիրներու անօդաչու թռչող սարքեր:

Ռուսաստանի պաշտպանու-

թեան նախարարութիւնը նշած է, որ զօրավարժութիւններուն բոլոր մասնակիցները, «Քորոնա» ժահրի հետ կապուած, պիտի գտնուին բժշկներու վերահսկողութեան տակ:

«Կովկաս-2020» զօրավարժութիւնները տեղի կ'ունենան Սեպտեմբեր 21-26-ին, Ռուսաստանի Հարաւային ռազմական մարզը, Սեւ ու Կասպից ծովերուն մէջ:

Ընդհանուր առմամբ զօրավարժութիւններուն մէջ ներգրաւուած է 80 հազար մարդ, անոնց կարգին՝ Արտակարգ իրավիճակներու նախարարութեան աշխատակիցներ եւ անդամներ: Արտասահմանեան 6 երկիրներէն, ինչպէս նաեւ Հայաստանէն, զօրավարժութիւններուն կը մասնակցին մինչեւ հազար զինծառայող:

«Կովկաս-2020» զօրավարժութիւններու հրամանատարը՝ ՌԴ Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ, բանակի զօրավար՝ Վալերի Կերասիմովն է:

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Շարքունի Ծրագիրը

## Ռուք Պեյտրո Կինգսթրոմ, Ութը Սիլխառ Տուլարի Պատմությունը եւ Լիբանան Դեպի Դժոխք

### ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Թայյիպ Էրդողանի եւ Սպիտակ Տան հետ անոր ունեցած խորհրդաւոր յարաբերութիւններուն մասին ուսումնասիրութիւն մը հրատարակեց Ամերիկեան հեռատեսիլի ԷՆ. Պի. Սի. Ընկերութեան կայքէջը, ուր կը բացայայտուի Թուրքիոյ նախագահի եւ ՏԱՆՈՒՏ ԹՐԱՄՓի միջեւ սիրալիր յարաբերութեան դրդապատճառները:



Թիւրք վճռած է արագորէն հաստատելու նոր դատաւոր մը, անտեսելով այն իրողութիւնը որ նախագահ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅի պաշտօնավարման աւարտին 10 ամիս մնացած մերժած էին դատաւորի մը նշանակումը՝ առարկելով որ, շրջանաւարտ նախագահին պէտք չէ նման կարեւոր որոշում կայացնելու առիթ տրուի:



Հայաստանի նախագահի պաշտօնը վարած ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ վերջին յայտարարութիւններով ոգեւորուած են յատկապէս Ատրպէյճանի մէջ: Փոքր խումբ մը քաղաքագէտներու հետ հանդիպելով Քոչարեան ըսած է որ, Հայաստանի կառավարութիւնը Արցախի հարցի վերաբերեալ չունի հասկնալի դիրքորոշում եւ վարչապետ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻ մօտեցումը թէ, որեւէ լուծում ընդունելի պէտք է ըլլայ Հայաստանի, Արցախի եւ Ատրպէյճանի ժողովուրդներուն համար քաղաքական հնարք է:

Քոչարեանի այս խօսքերէն ետք անոր շրջապատը սկսած է մեղադրել Փաշինեանին՝ խաղաղութեան գործընթացը ձախողցնելու մէջ, այդպիսով անուղղակի պաշտպանելով թշնամի երկրի տեսակէտները:

Նախկին իշխող Հանրապետական կուսակցութեան փոխ-նախագահ ԱՐՄԷՆ ԱՇՈՏԵԱՆ ակնարկելով ԲՀԿ-ՀՅԴ-«Հայրենք» կուսակցութիւններու յայտարարած հանրահաւաքին, ըսած է որ, առանց ՀՀԿ-ի դժուար է պատկերացնել իշխանափոխութեան որեւէ լուրջ գործընթաց: Սակայն, երեքները կը խուսափին, առնուազն հրատարակաւ, որեւէ առնչութիւն ունենալ նախագահին ու ժողովին հետ:

Վերջապահութեան, երկու ընդդիմադիր կողմերուն միջեւ այս մրցավազքը ուր կրնայ հասնիցոյց կու տայ ժամանակը, իսկ Հոկտեմբեր 8-ին ծրագրուած հանրահաւաքի մասնակցութեան թիւը մեծ մասամբ կախել է այն բանէն, թէ ԲՀԿ-ի առաջնորդ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ իր հարստութենէն որքան գումար պատրաստ է ծախսելու՝ ժողովուրդը հաւաքելու համար:

Լիբանանի նախագահ ՄԻՇԷԼ ԱՌԻՆ մամուլի ասուլիսի մը ընթացքին անկեղծանալով ըսած է, որ «դժոխք պիտի երթանք» եթէ շուտափոյթ նոր կառավարութիւն չկայանայ:

Լիբանանի մէջ շատեր այն կարծիքին են, որ անցեալ դարու 80-ական թուականներուն նախկին զինուորական Միշէլ Առնի քաղաքական ասպարէզի վրայ յայտնուե-

# ԸՆկ. Սեպուհ Գալիպեան. «Լիբանան Պետք Զէ Կորսնցնէ Փրկութեան Ոսկեայ Առիթը»

Հայաստանի 1in.am «Առաջին Լրատուական»-ը հրատարակեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ ԸՆկ. Սեպուհ Գալիպեանի հետ կատարած հարցազրոյցը, որ կը վերաբերի Լիբանանի քաղաքական կացութեան, նոր կառավարութեան կազմութեան աշխատանքներուն եւ ապագայի հեռանկարներուն:

ԸՆկ. Գալիպեան հարցազրոյցին մէջ խօսեցաւ երկրի ճգնաժամային վիճակին, նաեւ անյապող կառավարութիւն կազմելու եւ խնդիրները լուծելու անհրաժեշտութեան մասին: Ան ներկայացուց ֆրանսական նախաձեռնութեան մանրամասնութիւնները եւ նշանակալ վարչապետ Մուսթաֆա Ատիպի մտադրութիւնը՝ կազմելու արհեստավարժ մասնագէտներէ բաղկացած կառավարութիւն մը:

ԸՆկ. Գալիպեան ցաւով նշեց, որ կազմութիւնը կ'ուշանայ, որովհետեւ ոմանք կը պահանջեն սեփական ներկայացուցիչներ ունենալ նախարարաց Խորհուրդին մէջ:

Կարեւորելով ու ոսկեայ վերջին առիթ համարելով Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնի բարեկամական նախաձեռնութիւնը, ԸՆկ. Գալիպեան յիշեցուց, որ սկիզբը Մաքրոնին առջեւ բոլոր խմբաւորումները խոստացած էին աջակցիլ անկախ մասնագէտներու կառավարութեան կազմութեան՝ հիմնուելով գլխաւոր նախարարութիւններու հերթափոխութեան սկզբունքին վրայ, սակայն հետագային բարդոյթներ յառաջացած էին՝ մասնաւորաբար Ելեմուտքի նախարարութիւնը պահելու շիւքարանուանութեան պահանջին կապակցութեամբ:

Հարց տալով, թէ ինչո՞ւ ոմանք փոխեցին իրենց դիրքորոշումը եւ սկսան խոչընդոտել նշանակեալ վարչապետին աշխատանքը, Վարիչ Մարմինի ատենապետը զգուշացուց, թէ որեւէ կողմ եթէ պահանջէ քաղաքական ներկայութիւն



ունենալ այս կառավարութեան մէջ, ապա Լիբանան պիտի հասնի վերջին տարիներու նոյն փակուղիին: «Այս կառավարութիւնը երկու յատակ աշխատանք պէտք է տանի՝ արմատական բարեկարգումներու իրականացումն ու ելեմուտանտեսական ճգնաժամի լուծումը», յիշեցուց ԸՆկ. Գալիպեան, բոլորին կոչ ուղղելով դիւրացնելու Ատիպի գործը, որովհետեւ Մաքրոն խոստացած է օգնել Լիբանանին, եթէ չհզօք կառավարութիւն մը պայքարի փտածութեան դէմ:

Դիտել տալով, որ ֆրանսական նախաձեռնութիւնը կը համարուի Լիբանանի ճգնաժամը լուծելու վերջին առիթը, ԸՆկ. Գալիպեան զգուշացուց, որ արդիւնաւետ կառավարութիւն մը անյապող չկազմելու պարագային Լիբանան պիտի ուղղուի դէպի անորոշութիւն:

ԸՆկ. Գալիպեան շեշտեց, որ նշանակեալ վարչապետը պէտք չէ հրաժարի իր պարտականութենէն, այլ անպայման կազմէ նախարարաց Խորհուրդը եւ զայն փոխանցէ նախագահին, ապա՝ խորհրդարանին, իսկ եթէ այդ կառավարութիւնը չարժանանայ վստահութեան քուէին, ապա կազմը մերժողները թող կրեն իրենց պատասխանատուութիւնը ժողովուրդին առջեւ:



Միացեալ Նահանգներու Գերագոյն Դատարանի դատաւոր ՌՈՒԹ ՊԵՅՏԸՐԻ ԿԻՆՁՊԸՐԿԻ մասին եկաւ նոր գործօն մը դառնալու նախագահական ընտրապայքարի վերջին շաբաթներուն: 87 տարեկան Կինգսթրոմը կը նկատուէր Դատարանի «ձախ թելի» ամենէն կարկառուն դէմքը: Նախագահ ՏԱՆՈՒՏ ԹՐԱՄՓ կը խոստանայ անմիջապէս առաջադրել պահպանողական թեկնածու մը, որ պիտի գայ Դատարանը աւելի եւս աջ թեքելու:

Դեմոկրատ թեկնածու ՃՕ ՊԱՅՏԸՆ կը պահանջէ, որպէսզի նոր դատաւորի նշանակումը ձգուի յաջորդ նախագահին, առիթ տալով որ ժողովուրդը ձայնը լսելի դառնայ այս հետեւանքային նշանակումին առթիւ: Սակայն, Մերակոյտի Հանրապետական մեծամասնուե-



լին առջին երկիրը հանգիստ օր չէ տեսած եւ դանդաղ սակայն հաստատ քայլերով կ'ուղղուի դէպի «դժոխք»:

Ամերիկացի միլիտանտներ ՉԱՔ ՖԻՆԻՍԻ այս շաբաթ հասած է իր նպատակին: Ան 40 տարի առաջ խոստացած է որ 8 միլիոն տոլարի իր ամբողջ հարստութիւնը պիտի բաշխէ մարդասիրական նպատակներու, ոչ թէ մահու ընդէ ետք կտակ ձգելով, այլ կենդանութեան ընթացքին, որպէսզի իր աչքերով տեսնէ անոնց արդիւնքը:

Ներկայացուցիչներու տան խօսնակ ՆԱՆՍԻ ՓԼՈՍԻԻ եւ Մայքրոսոֆթի հիմնադիր ՊԻԼ ԿԵՅԹՅԻ մասնակցութեամբ առցանց տեղի

ունեցած յատուկ արարողութեան մը ընթացքին Ֆինիս բոլոր ունեցուածքը բաշխած ըլլալով, վերջնականապէս փակած է իր բարեսիրական հիմնարկութիւնը: 89-ամեայ բարերարը իր կեանքի վերջին տարիները ապահովելու համար պահած է միայն 2 միլիոն տոլար:

Տարիներ առաջ, Ֆինիսի օրինակին հետեւելով այլ մեծահարուստներ, որոնց շարքին



Պիլ Կէյթս, ՌԻՈՐԸՆ ՊԱՖԷԹ, ՄԱՐԲ ԶԱՔԸՐՊԸԸՐԿ, ՃԷՖՖ ՊԵՂՈՍ եւ ուրիշներ խոստացած էին իրենց հարստութեան առնուազն 50 տոկոսը կենդանութեան ընթացքին յատկացնել բարեսիրութեան:

### Հայաստանի Մեջ Նշուեցաւ Անկախութեան 29-րդ Տարեդարձը

Շարունակուած էջ 1-էն

վարչութեան հաղորդագրութեան մէջ:

Վարչապետ Նիկոլ ֓աշինեան Անկախութեան տարեդարձի միջոցառումներու ծիրէն ներս, ներկայացուցած է Հայաստանի վերափոխման մինչեւ 2050 թուականի ռազմավարութիւնը: Միջոցառումը տեղի ունեցած է Մերոպ Մաշտոցի անուան Մատենադարանի շէնքը, մասնակցած են կառավարութեան անդամներ, ուսանողներ եւ աշակերտներ:

Փաշինեան յառաջիկայ 30 տարուայ համար Հայաստանի կարեւոր բաղադրիչները ամփոփելով ըսած է, «Մինչեւ 2050 թուականը Հայաստանի բնակչութիւնը հասցնել առնուազն 5 միլիոնի, ստեղծել 1.5 միլիոն նոր աշխատատեղ, յաղ-

րութիւնը ներկայացնում մինչեւ 2050 թուականի ռազմավարութիւն: Որովհետեւ մենք Հայաստանի վերափոխման ռազմավարութիւնը ընկալում ենք ոչ միայն որեւէ կառավարութեան գործողութիւն, այլեւ Հայաստանի վերափոխման ռազմավարութեան մշակումը եւ իրագործումը պատկերացնում ենք որպէս համազգային շարժում, որտեղ շատ կարեւոր դեր ունի պետական առաջնորդութիւնը, որտեղ պէտք է ներգրաւուեն մասնագիտական շրջանակներ, եւ, ի հարկէ, այս ռազմավարութիւնը պէտք է ժողովուրդն իրենք համարի»: Նիկոլ ֓աշինեան նշած է, որ այս ռազմավարութիւնը ոչ միայն բարեփոխումներու, այլեւ փոխակերպումներու մասին է, որոնք տեղի պէտք է ունենան հանրային կեանքի բոլոր տիպի



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը ներկայացնէ Հայաստան-2050 ռազմավարութիւնը

թահարել աղբատուութիւնը աշխատանքով, եօթնապատկէլ միջին աշխատավարձը, առողջ ապրելակերպը դարձնել ազգային յատկանիշ եւ կեանքի տեղողութիւնը հասցնել 90 տարեկանի:

«Նախ, ինչո՞ւ է անհրաժեշտ ունենալ այսպիսի ռազմավարութիւն: Ես այս հարցին կը փորձեմ պատասխանել այսօրուայ տեսակետից, եւ եկէ՛ք այսօրուայ իրականութեանը նայենք 30 տարի առաջուայ աչքերով: Արդեօք մենք այն ժամանակ մենք մեր մտապատկերում կամ մեր օրակարգում ձեւաւորե՞լ ենք, ձեւակերպե՞լ ենք միտք, թէ ինչպիսին ենք մենք պատկերացնում Հայաստանի Հանրապետութիւնը 2020 թուականին: Յաւոք, պիտի արձանագրեմ, որ մեր իրականութեան մէջ, առնուազն պետական մակարդակում, առնուազն 30 տարուայ կտրուածքով այդպիսի ռազմավարութիւն չի եղել, եւ սա գուցէ նաեւ պայմանաւորում է մեր այսօրուայ բազմաթիւ խնդիրները», ըսած է Փաշինեան:

Վարչապետը անդրադարձած է ռազմավարութեան կառուցուածքին՝ խօսելով գաղափարի, տեսլականի եւ գործողութեան մասին: «Շատ կարեւոր է արձանագրել՝ քաղաքական շահարկումներից զերծ մնալու համար. կարող է հարց ծագել, թէ ինչու է այս կառավար-

յարբերութիւններուն մէջ, եւ որոնց հետեւանքով կը կարողանանք հասնիլ թուիչ քաճեւ գարգացման: Ընդ որում՝ այնպէս չէ, որ ռազմավարութիւնը մինչեւ 2050 թուական պէտք է ճշգրիտ մնայ, այլ կառավարութիւնը կ'ակնկալէ անոր շուրջ քննարկման ծաւալում, որ կրնայ ժողովուրդի որոշումով, անոնց կարգին՝ ընտրութիւններու արդիւնքներու արտայայտմամբ որոշակի վերափոխումներ ապրիլ:

Ռազմավարութեան գաղափարական հենքի առումով վարչապետը նշած է, որ այս փոփոխութիւնները հիմնուած են մեր ազգային արժէքներու, ազգային նպատակներու, հանրային պահանջարկի վրայ եւ շատ կարեւոր է հասկնալ՝ ո՞րն է այս վերափոխման վերջնական նպատակը, ի՞նչ խնդիր կը դնենք մեր առաջ: Ի հարկէ, ամենակարեւոր գաղափարական հենքը վերջերս ընդունուած Ազգային անվտանգութեան ռազմավարութիւնն է, որու առաջաբանը մենք արձանագրած ենք, թէ որոնք են մեր ազգային արժէքները, բայց մինչեւ 2050 թուականի ռազմավարութեան տեսանկիւնէն առանձնացուցած ենք 4 առաջնորդող արժէքներ՝ Հայոց պետականութիւն, Կրթութիւն, Անհատ եւ Աշխատանք:

Նիկոլ ֓աշինեան նաեւ պատասխանած է շնորհանդէսի մասնակիցներու հարցերուն:

### Փաշինեանը Երկու Արանքի Միջեւ

Շարունակուած էջ 1-էն

ղաշտում, սա, ի հարկէ հասկանալի եւ ընդունելի է, բայց իշխանութեան գործունեութեան տրամաբանութեան մէջ՝ չափազանց վտանգաւոր, որովհետեւ «ճիշդ» քայլերի փնտռուողը կարող է կաթուածահար անել իշխանութիւնը եւ ի վերջոյ՝ նաեւ երկիրը, որովհետեւ որեւէ որոշում միշտ աւելի լաւը դարձնելու հնարաւորութիւն կայ, միշտ եւ ամենուր կարող են լինել եւ անխուսափելիօրէն կը լինեն դիտարկումներ, քննադատութիւններ, առաջարկութիւններ, մէկը միւսից գեղեցիկ հիմնաւորումներով եւ փաստարկումներով:

«Բայց իշխանութիւնը պէտք է ի վիճակի լինի կայացնել որոշումներ, բնականաբար՝ ճիշդ որոշումներ: Բայց որքանով պէտք է այդ որոշումները ճիշդ լինեն, որքանով ճշգրտուած եւ իսկապէս: Այս հարցը հրատապ է յատկապէս այսօր Հայաստանում իշխող քաղաքական ուժի՝ «Քաղաքացիական Պայմանագրի» պատմութեան եւ գաղափարաբանութեան համաթեքսում», գրած էր Փաշինեան: Վարչապետի այս տրամաբանութեամբ ընթանալու պարագային միշտ ալ կարելի կը դառնայ արդարացնել առնուած որեւէ որոշում: Յեղափոխական կառավարութիւնը պէտք է կարողանայ իր տեսակետներն ու մօտեցումներն

բացատրել եւ արդարացնել իր համակիրներուն ու ժողովուրդին առջեւ, որուն վստահութեան քուէն ստացած էր ոչ հեռու անցեալին:

Ճիշդ է, որ իշխանութեան դեկին վրայ գտնուելով իրենք աւելի տեղեկացուած են եւ իրենց հաշուարկները կառուցուած են աւելի լայն տեսադաշտով, սակայն, միւս կողմէ, յեղափոխութեան կողմնակիցները ունին արդարացի մտահոգութիւններ, որ նախկին ապագային ուժերը, տիրապետելով բաւական մեծ լծակներու, իշխանութեան վերադառնալու իրենց նպատակներուն մէջ կրնան հասնիլ որոշ յաջողութիւններու:

Այս կացութեան դիմաց իշխանութիւնները կրնան շարունակել ընել իրենց գործը, իսկ քննադատները շարունակեն ներկայացնել իրենց մտահոգութիւնները: Այս նաեւ կ'օգնէ, որ ժողովուրդը զգայ թէ իր հիասթափութիւնները օրակարգի վրայ են ու անոնց մասին խօսողներ ու արտայայտողներ կան: Համոզուած ենք որ, այս երկու մօտեցումներու գլխաւոր դերակատարները, իրենց հետ ունենալով Հայաստանի ժողովուրդին մեծամասնութիւնը, երբ անհրաժեշտութիւնը ծագի, պիտի գտնուին մոյմ խրամատիմ մէջ, պաշտպանելու համար երկիրը՝ վրեժխնդիր ուժերէն:

«ՄԱՍԻՍ»

### Տեղի Ունեցաւ ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Կառոյցներու Ընդլայնուած Հաւաքը

Շարունակուած էջ 1-էն

սանդղին, այլ շտապ օգնութեան ձեւով, ուտեստեղէն սկսաւ բաշխել գործազուրկ եւ կարիքաւոր հայ եւ օտար ընտանիքներուն, եւ արիւնարշաւներ կազմակերպեց՝ Ամերիկեան Կարմիր Խաչին հետ համագործակցութեամբ: ՀԿԲՄ օգնութեան ձեռք երկարեց նաեւ Պէյրութի Օգոստոս 4-ի պայթիւնի աղէտալիներուն, իսկ վերջերս բժշկական սարքաւորումներ առաքեց նաեւ Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան: Ժողովին մասնակից միաւորներու ներկայացուցիչները հանդէս եկան իրենց աշխատանքային զե-

կոյցներով եւ հետագայ ծրագիրներու մասին տեղեկութիւններով:

Կարծիքներու փոխանակում տեղի ունեցաւ Հայաստանի ներքին քաղաքական գործադրամարմիններու մասին, ինչպէս նաեւ անդրադարձ եղաւ Միացեալ Նահանգներու ներքաղաքական իրավիճակին եւ յառաջիկայ նախագահական ընտրութիւններու կարեւորութեան մասին:

Միաւորներուն տրուեցան յանձնարարականներ՝ աւելի աւելի մօտէն շփուելու իրենց անդամներուն, համակիրներուն եւ շրջանի Հայութեան հետ ընդհանրապէս:

ՄԴՀԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

### Հրանդ Տինքի Անուան Սրցանակին



Օսման Քաւալա եւ Մուգն Հասան

Շարունակուած էջ 1-էն

Թուրքիայէն դուրս գործունեութիւն ծաւալող գործիչներէն՝ Տինքի անուան մրցանակին արժանացած է կանանց իրաւունքներու պաշտպանութեամբ զբաղող եգիպտացի աթիւիստ Մուգն Հասանը: «Նման արժէքաւոր մրցանակ ստանալը կ'իմաստաւորէ իմ վե-

րապրած բոլոր դժուարութիւնները եւ կը յիշեցնէ առանց յուսահատելու պայքարը շարունակելու կարեւորութեան մասին», - ոգեւորութեամբ նշած է Հասանը:

Արդէն 12-րդ անգամ Սեպտեմբեր 15-ին, Տինքի ծննդեան օրը տեղի ունեցող միջոցառումը այս տարի առցանց հարթակով կայացաւ:

**2եր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերօրին**  
**Massis2@earthlink.net 626-797-7680**

# Ջեկոյց . Ռուսաստանը Հայաստանի Աւանդական, Բայց Ոչ Միշտ Յուսալի Դաշնակիցն է

Ուաշինգթոնի Քարնեյի հիմնադրամը հրատարակած է վերլուծաբան՝ Փոլ Սթրոնսֆիլդի «There Goes the Neighborhood: The Limits of Russian Integration in Eurasia» վերնագիրով գեկոյցը յետխորհրդային երկիրներու նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականութեան մասին:

Ռուսաստանի յաւակնութիւնները եւրասիական տարածաշրջանին մէջ եւ վարած կոշտ քաղաքականութիւնը կը յանգեցնեն տարածաշրջանային անկայունութեան, ըսուած է գեկոյցին մէջ: Այս ջանքերն ա՛լ աւելի ուժեղացան 2014 թուականին Ուքրանիոյ նկատմամբ Մոսկուայի գաւթողական բռնագորակական գործողութիւններէն յետոյ: Որդեգրելով «մենք» ընդդէմ «անոնց» մօտեցումը՝ Ռուսաստանը կը փորձէ յատկապէս սահմանագիծ քաշել իր ազդեցութեան գօտիի երկայնքով եւ իսպիանեյ յետխորհրդային երկիրներու մերձեցումը Արեւմուտքին հետ:

Այս քաղաքականութիւնը նոր երեւոյթ է, ըսուած է գեկոյցին մէջ: Ռուսաստանը ԽՍՀՄ-ի փլուզումէն յետոյ զգալիօրէն գիշեցաւ իր դիրքերը Արեւելեան Եւրոպայի, Հարաւային Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ, սակայն 1991 թուականէն ի վեր անմիջապէս ձեռնամուխ եղաւ իր ազդեցութեան գօտիներուն վերականգնման: Այդ մասին կը վկայեն Մոսկուայի շարք մը նախաձեռնութիւնները, ներառեալ Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ) ստեղծումը, Միութենական պայմանագրի կնքումը, Մաքսային միութեան, Եւրասիական տնտեսական միութեան, Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) ձեւաւորումը ու այլ նախաձեռնութիւններ: Այս ուղղութեամբ Մոսկուան կ'օգտագործէր նաեւ տարածաշրջանային հակամարտութիւնները:

Ռուսաստանի այս յաւակնութիւնները մտահոգութիւն կ'առա-



ջացնեն յետխորհրդային շատ երկիրներու մէջ: Ռուսական նէօ-կայսերապաշտութեան նկատմամբ վախը դարձած է Եւրասիայի մէջ անվտանգութեան միջավայրի գնահատման գերիշխող խնդիր: Ուքրանիոյ ու այլ յետխորհրդային երկիրներու հանդէպ յարձակողական եւ կոշտ քաղաքականութիւնը կը ցուցադրէ, թէ որքան հեռու կրնայ երթալ Մոսկուան անկախութեան, տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան անտեսման հարցով:

Ռուսաստանի երկար տարիներու դաշնակից՝ Հայաստանը, օրինակ, այսօր որոշակի վերապահումներ ունի Մոսկուայի յուսալի դաշնակից ըլլալու հարցով, նշուած է գեկոյցին մէջ: Այս միտումը յատկապէս սրուեցաւ թաւշեայ յեղափոխութենէն յետոյ: 2018-ի ապրիլեան զարգացումներու ընթացքին Մոսկուան աշխոյժ միջամտութիւնը չցուցաբերեց, ճիշդ հաշուարկելով, ըստ գեկոյցին, որ ունի բաւարար լծակներ՝ Երեւանի՝ ռուսամէտ ուղեգիծը պահպանելու համար: Յեղափոխութիւնը այդպէս ալ չկարգաւորեց հայ-ռուսական յարաբերութիւններուն մէջ առկայ խնդիրները, ներառեալ ուժանիւթերու մատակարարման հարցը: Ռուսաստանը կը շարունակէ ստի-

պել հայկական կողմը վճարելու կազմի դիմաց նախահամալրարկային գիներով, որոնք աւելի թանկ են, քան այսօր շուկայի առկայ գինը: Այդ կը ստիպէ Երեւանը փորձելու զանազանակերպել իր ուժանիւթերու ներմուծումը՝ երկխօսութիւն ծաւալելով չինական ընկերութիւններու, իրանի ու վրաստանի հետ:

Ջեկոյցին մէջ մատնանշուած է, թէ հայ-ռուսական այլ խնդիրներու շարքին են ռուսական գէնքի վաճառքը Ատրպէյճանին, Ռուսաստանի նկատմամբ աճող անվտանգութիւնը Հայաստանի բնակչութեան մէջ՝ կապուած ապրիլեան պատերազմի, Կիւմրիի մէջ տեղի ունեցած ողբերգութեան եւ ռուսական տնտեսական քաղաքականութեան հետ: Անոր հետ մէկտեղ, գեկոյցը կ'ընդգծէ՝ Ատրպէյճանի հետ զարբաղեան հակամարտութեան առկայութիւնը ու Հայաստանի հակառակորդ՝ Թուրքիոյ դիրքորոշումը կը սահմանափակեն Երեւանի ընտրութիւնը անվտանգութեան հարցով՝ ստիպելով ամուր յարաբերութիւններ պահպանելու իր «աւանդական, բայց ոչ միշտ յուսալի դաշնակիցի ու պաշտպանի հետ»:

Այնուամենայնիւ, Ռուսաստանի սահմանափակ տնտեսական մի-

ջոցները, մեղմ քաղաքական գծի բացակայութիւնը, տարածաշրջանին մէջ այլ տէրութիւններու ներգրաւուածութիւնը, ինչպէս նաեւ յետխորհրդային երկիրներու հասարակութիւններուն մէջ ընթացող փոփոխութիւնները լուրջ խոչընդոտներ են ռուսական այս յաւակնութիւններու ձանապարհին: Այն կը մնայ անկանխատեսելի եւ ազդեալի յարձակողական երկիր Եւրասիոյ մէջ, կը նշէ գեկոյցը, ուստի յետխորհրդային երկիրները պէտք է ուշադիր կշռադատեն իրենց քայլերն ու զգուշօրէն զարգացնեն իրենց կապերը Արեւմուտքի հետ: Ռուսաստանը նման քայլը կը դիտարկէ որպէս իր շահերու սպառնալիք:


Հնչակեան կուսակցութիւնը մեծ դեր ունէր կատարելիք: Ան, քաղաքական եւ տնտեսական բարօր եւ ազատ կեանք տալէ առաջ, պէտք էր հայ հոգին արիացնէր, հին մտայնութիւնները շրջէր, հասկցնէր շրջապատին՝ թուրքին եւ մեր ժողովուրդին, թէ մարդիկ եւ ժողովուրդներ ստրուկ չեն ծնիր, իբրեւ ստրուկ կ'ապրին ու կը մահանան...

Իրաւունքները խնդրանքով եւ աղերսանքով չեն տրամադրուիր, այլ կը ստացուին պահանջելով եւ ուժով:

Այս բոլորը դիւրին չէր. ինչպէս դիւրին չէր տազնապով մը դադրած սիրտը բաբախեցնել եւ շարժման մէջ դնել: Հնչակեան կուսակցութիւնը, կենդանի խաչելութեան մը յանձնառութեամբ, գործի լծուեցաւ այն մեծ եւ ամուր հաւատքով, թէ այս խաչելութիւնը ծնունդ պիտի տար մեր ժողովուրդի Հրաշալի յարութեան: Հնչակեան կուսակցութիւնը գիտակ էր նաեւ այն իրողութեան, որ մեր ժողովուրդը թէեւ արտաքին երեւոյթով շատ բան կորսնցուցած էր, բայց տակաւին կը պահէր ներքին արժանիքներ, հոգ չէ թէ երբեմն վտիտ վիճակով, բայց կենդանի եւ յուսալի:

Հնչակեան կուսակցութիւնը

արթնութիւն չեփորեց, քաղաքական թմբիով քնացող հայութեան: Սարսափէն կարկամած լեզուները բացաւ, շրթները շարժման մէջ դրաւ. Հոգիները վերանորոգեց. գանոնք արիացնելէ ետք՝ թուլցած կամքերը պողպատեց եւ գանոնք առաջնորդեց դէպի ազատութիւն:

Ուրիշներու հաշուոյն գործող բազուկները, սեփական շահերու համար, վեր բարձրանալ սկսան, արիւնաքամ եւ կոշտացած մատերն ու ձեռքերը պրկուած բուռնքներու վերածուեցան՝ պատժելու համար չարաշահողները: Մէկ խօսքով՝ «կեանքի հոգին» մարտիկին հոգիին փոխուեցաւ:

Այս բոլորը ունենալու համար ան պայքարեցաւ երկար ժամանակ: Օգտագործեց իր մամուլն ու բեմը, կազմակերպչական ցանցը: Նոր հայութեան ստեղծած նոր դէպքերը իրար յաջորդեցին, նոր շրջանի նոր դէմքերով: Հայոց պատմութեան նոր անկիւնադարձէն-1887-ին յաջորդեցին Կարնոյ, Գում Գափուի, Պապ Ալիի ցոյցերը, Սասունի, Ջէյթունի, Շապին Գարահիսարի ապստամբութիւններն ու ինքնապաշտպանութիւնները:

Հայ յեղափոխութեան վերակերտած նոր հայութիւնը իր կորսուած իրաւունքները նոր ուղիով ձեռք ձգել կը ձգտէր, ձանձրացած ու ձեռքագատած հին ուղիներէ եւ փորձերէ:

«Մի՛ աղերսեր, այլ պահանջէ՛» յեղափոխական կարգախօսով հայրենագուրկ եւ սակայն հայրենիք, ազատութիւն եւ մարդկային տարրական իրաւունք պահանջողներու այս ցոյցը ոչ միայն հնչակեաններէն յիշատակուելու արժանի է, այլ բոլոր այն հայերէն, որոնք կը հպարտանան այսօր երեւան եկող եւ փայլող մեր հայկական արժէքներով:

Պէտք է վերապրեցնենք մեր մօտաւոր անցեալի փառքերը կազմող այս փառաւոր եւ արիւնոտ ցոյցերը, իրենց ներքին հոգիով, որովհետեւ առանց անոնց՝ մենք ներկայի փառքերէն զուրկ եւ զուցէ պատմութեան անցնող ինքնակորոյս ժողովուրդ մը դառնալինք եւ կամ «գոյութիւն» մը քաշկուտող հաւաքականութիւն մը:

Փառք եւ պատիւ Պապ Ալիի մեծ ցոյցին եւ անոր հերոսներուն, որոնք ստրուկը մարտիկի վերածած մեր ժողովուրդը մղեցին տէր դառնալու իր պատմա-անհատական իրաւունքներուն:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ**  
 (200 ՀՈԳԻ ԸՄԱՐ)  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՄԱՐ**  
 1060 N. ALLEN AVE.  
 PASADENA CA  
 91104  
 (626) 797-7680

**URGENT APPEAL**

We stand in solidarity with our community in Beirut, Lebanon. The consequences of the tragic explosion on August 4 are horrific. Nothing can bring back precious lives lost. Nor is it easy to restore homes, churches, community centers and businesses damaged. But we can lend a helping hand to our brothers and sisters at the AEBU - Lebanon who are doing the impossible to help the wounded and the displaced following this disaster.

**TOGETHER**  
 let's try to ease the pain and **RESTORE HOPE!**

**CLICK HERE AND DONATE**

# Փոքր-ինչ ժպիտ Իմ Կեանքից...

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ



Ներքոյ «Ժպիտների շարք»-ի մի մասը տպագրուել է 2002 թուականի Ապրիլ 30-ին՝ Պոլսի «Ժամանակ» օրաթերթում: Իմ կեցութեան երեք ամսուայ ընթացքում, «Ժամանակ»-ից բացի տարատեսակ նիւթերով հանդէս եմ եկել նաեւ «Մարմարա» օրաթերթում եւ Հրանտ Դինքի խմբագրած «Ակօս» շաբաթաթերթում, ըստ որում, եղբրական մահով կեանքն աւարտած Հրանտ Դինքի խնդրանքին ընդառաջեցի, ամէն շաբաթ մի նոր նիւթ էի իջեցնում «Ակօս»-ում: Այժմ գանք մեր հիմնական նիւթին:

Երգիծանքն ու հումորը մեր կեանքի անբաժան մասն են: Թէեւ հասարակութեան մէջ կան մարդիկ, որոնք հումորի զգացողութիւնն չունեն: Երբ ասուում է, որ այս կամ այն անձը հումորի զգացողութիւնն չունի՝ մի մօտենաք նրան:

Երգիծանքը եւ հումորը, ճիժդ տեղին ասուած ասացուածքը թարմացնում են մթնոլորտը եւ, նոյնիսկ վիճաբանութեան ամենաթէժ պահին անգամ, բորբոքուած կրքերը տեղի են տալիս վայրկեաններ տեւող անզուսպ խնդուքի:

Ես անէկդոտ շատ եմ սիրում, բայց սոսկալի մոռացկոտ եմ եւ անէկդոտ պատմելու շնորհ էլ չունեմ: Սակայն, իմ բազմամեայ գործունէութեան ընթացքում պատահում են ծիծաղելի իրական դէպքեր, որոնք, թէեւ անէկդոտ չեն, բայց հաճելի զգացումով են պարուրում ընթերցողի հոգուն: Յուսամ յուսախաբ չեմ անի ընթերցողներին:

\*\*\*

2002 թուական, Փետրուար ամիս: Պոլսի օդանաւակայան: Հրաւիրուած եմ համերգ-ների տեղի «Մայաթ Նովա» երգչախմբի հետ: - Աս ի՞նչ է մատարօ, ֆրակ չէ՞ք բերած,- հարցնում է երգչախմբի ատենապետ Բագրատը: - Բարեկամս, մէկ ճամպրուկը արդէն լեցուն է նոտաներով, միւսն ալ՝ հագուստ-մագուստ, նուէր-մուէր եւ այլ բաներ: Մտածեցի, որ հոս կրնանք վարձել:

- Լաւ ըրեր էք, մենք հոս կարելի կուտանք, երգչախումբի անդամներէն մէկը թաքսիդոյի խանութ ունի, հոգ մ'ընէք, առջեւնիս դեռ երեք ամիս կայ: Ատ ալ թող նուէր մը ըլլայ Ձեզի մեր երգչախումբին կողմէ:

Յաջորդ օրը Պոլսի երեք հայատառ թերթերն էլ լայնածաւալ հաղորդագրութիւններով անդրադարձան իմ ժամանման եւ նպատակի մասին:

Մի քանի օր անց, նախապէս պայմանաւորուածութեան համաձայն, Բագրատն ինձ տարաւ Մինասին պատկանող ֆրակի (Taxido) դերձակատուն-խանութը: Հագիւ էինք խանութից ներս մտել ու գրոյցի բռնուել, երբ գրեթէ շնչապառ վիճակում ներս խուժեց գեղադէմ մի տիկին, որը անփափական կատ ձեւով ընդհատեց մեր գրոյցը ու շարեց հետեւեալ պարբերութիւնը.

- Վախցայ, որ կրնամ չհասնիլ: Կը ներէք, ես Մաքրուհիէն (Մինասի կինն է) գիտցայ, որ հոս պիտի ըլլաք այս ժամանակ: Պարոն Անասեան, ես բանաստեղծութիւններու տետրակ մը ունիմ եւ փափաքս է հրատարակել: Լրագրէն

իմացայ, որ դուք գրող ալ էք, պիտի խնդրեմ Ձեր կարծիքը գրածներու մասին, ահա բերած եմ, - ասաց ու պայուսակից հանեց լաթակազմ հաստիկ մի ձեռագիր տետրակ:

Երիտասարդ կնոջը իսկապէս օգտակար լինելու մտահոգութեամբ, մէկ ամբողջ օր ծայրէ-ծայր կարդացի կնոջ բանաստեղծութիւնները, եւ սակայն, շատ քիչ բան գտայ հրատարակութեան արժանի: Գրելու ձիրք ունէր կինը, բայց պակասում էր գիտութեան պաշարը.

- Գիտէ՞ք յարգելի տիկին, - ասացի յաջորդ հանդիպմանը, - յաջող գործեր կան անշուշտ, սակայն ատոնց թիւը շատ քիչ է, չեմ կարծեր, որ կարենաք նոյնիսկ պզտիկ գրքոյկ մը հրատարակել: Աւելի գրեցէք, բայց մինչ այդ խորհուրդս է շա՛տ կարգալ:

- Ի՞նչ, ի՞նչ ըսիք Պարոն Անասեան, շատ կարգա՞լ..., բայց այդքան կարեւոր է կարգալը:

- Այո՛, շատ կարեւոր է տիկին, որովհետեւ «որքան շատ կարգաք, այնքան քիչ ժամանակ կ'ուենանք գրելու համար...»:

\*\*\*

- Ի՞նչպէս այդքան արագ կը գրէք մատարօ,- հարցնում է երգչախմբի տղաներից մէկը,- գրեթէ ամէն շաբաթ գրութիւն մը կը հանէք:

- Ինչպէս դուն՝ ձախէն աջ: Սարգիսը ակնապիշ երեսիս է նայում: Վստահ եմ, որ հումորը չհասկացաւ: Յաջորդ փորձի դարձրին Սարգիսը դարձեալ նոյն հարցն է ուղղում:

- Մատարօ, ի՞նչ ըսել կ'ուզէք՝ «ձախէն աջ», ամէն մարդ ատանկ կը գրէ...

Չէ՛, Սարգիսը հումորը չի հասկացել, ստիպուած եմ լուսաբանել:

- Սարգիս, մի մոռնար, որ տարբեր ազգեր տարբեր ձեւով կը գրեն, մէկը՝ ձախէն աջ, միւսը՝ աջէն ձախ, երրորդը՝ վերէն վար, եւ այլն: Բայց միտքը հանդարտեցնելու համար ըսեմ, որ ես կը գրեմ երբ պարապ ըլլամ:

- Հա՛, հիմա հասկցայ,- յարթականօրէն բարձրաձայնում է Սարգիսը: Հիմա արի եւ իմացիր, թէ ի՞նչ հասկացաւ նա:


\*\*\*

...Պոլսի Սկիւտարի գերեզմանատանն ենք: Դեռ Պետրոս Դուրեանի գերեզմանին չհասած, տեսայ, որ բարեկամս յամառօրէն կանգնած է մի գերեզմանի առջեւ եւ կարդում է գերեզմանաքարի գրութիւնները:

- Ծօ՞, ի՞նչ կեցեր ես, շարժէ, եկուր վայրկեան առաջ Դուրեանին

# Անկախութիւնը՝ Առաքելութիւն Սը Որուն Համար Արժէ Ապրիլ

ՂՈԿՏ. ՀՐԱՅՐ ԾԵՊԵՏԵԱՆ  
Ընդհանուր Քարտուղար՝  
Արաբական Ծոցի  
Աստուածաշունչի Ընկերութիւն



Ես հայ մըն եմ որ ծնած, դաստիարակուած եւ ապրած եմ Պէյրութ, Լիբանան եւ ունիմ Լիբանանեան հպատակութիւն: 2005 տարին աշխատանքային նստավայրս տեղադրուեցաւ Նիկոսիա, Կիպրոս, ուր նաեւ ստացայ Կիպրական հպատակութիւն: Արդէն եղաւ աւելի քան երեսուն երկար տարիներ ուր կը գործեմ Արաբական Ծոցի երկիրներու տարածաշրջանին մէջ: Եւ իմ հարցումը, «Ուր է իմ տունը: Պէյրութ, Նիկոսիա, Քուէյթ ու տակաւին»: Երեւի կրնամ ներկայացնել սփիւռքահայու ապրած կեանքի մէկ լաւ տարբերակը, ապրելով հոս թէ հոն: Բայց իմ սրտին մէջ կայ սէր եւ երախտագիտութիւն: Սէրը եւ երախտագիտութիւնը այն երկիրներուն որոնք ինձի տունն են հպատակութիւն, ինքնութիւն, ուսում, երդիկ եւ մարտահրաշխանքներ կարենամ արժէքի կեանքը կերտել: Եւ իմ սրտին մէջ կայ նոյնքան ուրախութիւն եւ անձկութիւն: Եւ այդ իմ հայրենիքիս՝ Հայաստանի հանրապետութեան հորուն անկախութեան 29րդ տարեդարձն է Սեպտեմբեր 21ին:

Այս այն հայրենիքս է՝ որ իմ սրտիս մէջ կը կուտակէ հպարտութիւնը՝ իւրաքանչիւր անգամ որ կ'այցեցեմ: Հոն ուր կեանքիս համար մշակուցի հասկացողութիւնը կը մշակուի եւ Քրիստոնէական հաւատքս կը գործնայ: Հայրենիքը՝ ուր իմ ազգային ինքնութիւնը

գերեզմանը գտնանք,- ասում եմ ես:

- Հենրի՜կ, հոս եկուր, նայէ՛, մարդը գրեթէ հարիւր տարի ապրեր է..., համա թէ կ'ապրին մարդիկ:

- Սիւալ ես բարեկամս, այդ մարդը, որու անունն ալ չեմք լսած, թէրեւս հարիւր տարի միայն գոյութիւն ունեցած է երկրի վրայ առանց արժէքաւոր ներդրում մը ըրած ըլլալու ի բարօրութիւն հայրենիքի: Ապրողը մեր դժբախտ երիտասարդ Պետրոս Դուրեանն է, որ քսան տարեկան հասակին անմահացաւ:

\*\*\*

Հայաստանի թաթու Ալթունեանի անուան երգի-պարի համոյթի հերթական համերգն է բերքառատ գիւղերից մէկում: Ես պարուսոյց Արտաշէս Կարապետեանը որոշում ենք համոյթի անդամներին մի երկու ժամ շուտ տանել գիւղ՝ տեղի հիւրասէր գիւղացիների բարիքից օգտուելու համար: Ծրջկենտրոնի մշակուցի պալատի առջեւ, այստեղ-այնտեղ, նոյնիսկ քարերի վրայ նստած, վայելում ենք գիւղացիների բերած բարիքները՝ լաւաչ հաց, պանիր, մածուն, թան, եւ այլն:

Կողքիս նստած մի գիւղացու հետ գրոյցի մէջ ենք: Ինչպէս միշտ, դժուար գտնելիք Քէնթ սիգարետ եմ ծխում: Երիտասարդ գիւղացին հինգ ըրպէն մէկ սիգարետ է խնդրում ու ոգեւորութեամբ պատմում.

- Անցեալ տարի ձմերուկ ցանցի, բաւական շահ ունեցայ..., սիգարետ կարելի՞ է:

կը մխրճուի նոյնինքն իր հողին մէջ եւ որուն մէջ էն իմ պատկանելիութեան գիտակցութիւնը կ'արտացոլայ եւ կը բիւրեղանայ:

Եւ այսօր՝ իւրաքանչիւր հայուն մէկ կարեւոր առաքելութիւն: Առաքելութիւնը՝ պահելու, հոգալու եւ ծաղկեցնելու Հայրենիքը՝ անկախ թէ ուր կ'ապրի: Եւ անկախութիւնը այս իմաստով՝ հայուն համար պէտք է դառնայ առաքելութիւն՝ որուն համար արժէ ապրիլ:

Շնորհաւոր անկախութեան տարեդարձ՝ Հայաստանի հանրապետութեան: Անկախութիւն մը՝ ուր հայուն կեանքի ինքնութիւնը կը խարսխուի եւ կը վերածուի ազգային առաքելութեան: Առաքելութիւն մը՝ որ մեր կեանքերը կը դարձնէ իմաստալից:

Եւ այս այն առաքելութիւնն է որ հայուն կեանքը կը դնէ պատմութեան շարունակականութեանը մէջ:

Վերցնում է սիգարետը եւ շարունակում,- բայց նախանցեալ տարի կաղամբ էի տնկել եւ աւելի շահ ունեցայ..., սիգարետ կարելի՞ է: Կրկին տալիս եմ սիգարետը եւ սարսափով նկատում որ, եթէ այսպէս շարունակուի այս անգութ գրոյցը՝ շուտով ի լրում է հասնելու տուփի պարունակութիւնը, մինչդեռ մենք դեռ մի քանի ժամ այնտեղ ենք լինելու:

- Այս տարի դարունը մի քիչ ուշ եկաւ,- շարունակում է գիւղացին,- մտահոգութեան մէջ եմ, թէ ի՞նչ պիտի ցանեմ..., մի սիգարետ կարելի՞ է...

- Լսիր բարեկամս,- համբերութիւնից դերս ելած պոռթկում եմ՝

- Այս տարի էլ թութուն ցանիր, թութուն...:

\*\*\*

Պոլսահայ Ռիթան Սիֆաքս երգչախմբիս գիտակ, լաւագոյն երգչուհիներից մէկն է: Հերթական փորձի ընթացքին դիմում է ինձ.

- Մատարօ, հոս ՖԱ գրուած է, ալթօները ՍՈՂ կ'երգեն:

- Այո, Ռիթա, ճիշդ ես, հոս սիւալ գրուած է, ՍՈՂ պիտի ըլլայ: Քիչ անց դարձեալ՝ «Հոս ՖԱ գրուած է...»

- Այո, Ռիթա, բայց դուն անոնց պէս ՍՈՂ երգէ:

- Բայց..., - ուզում է շարունակել Ռիթան:

Համբերութիւնից դուրս ելած, գրեթէ բոլորով ասում եմ.

- Դուն անցեալ փորձին բացակայ էիր եւ տեղեակ չես, որ մենք

# Լեզուաբան Հրաչեայ Աճառեանի (1876-1953) «Արմատական Բառարան»ը Ներկայ մտահոգութեանց Լոյսին Տակ

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՍ

## ԻՆՅՈՒՆ Կերոյիչեյ Աճառեանը

Ներկայիս հայերէն լեզուն կը մնայ վտանգներու ենթակայ թէ՛ Հայրենիքէն ներս եւ թէ՛ արտաշխարհի տարածքին: Զոյգ արեւելահայ եւ արեւմտահայ լեզուները իրենց հիմքէն աղճատուելու ենթակայ եղած են արդէն անցնող յիսնամեակին՝ դպրոցներու եւ ուսուցիչներու թիւն ու որակը անփութօրէն հետզհետէ խախտած ըլլալով, մասնաւորաբար սփիւռքի մէջ: Մտահոգ անձինք յաճախ գրած են այդ մասին, եւ նոյնիսկ կը կարծեմ թէ արդէն ուշ է դժբախտաբար վերականգնելու անցեալի փառքը եւ կամ անոր մէկ մասնիկը: Եթէ վերջին ճիգ մը պիտի ընենք, գէթ վերջիշենք մեր նախնայեալ սերունդի հակալեզուաբանը՝ Փրոֆ. Հրաչեայ Աճառեանը, հակիրճ ակնարկ մը նետելով իր հոյակապ եւ անկրկնելի «Հայերէն Լեզուի Արմատական Բառարան»ին վրայ, վերագտնելու համար մեր ոսկեղնիկ լեզուին ակունքները ու մասամբ մխիթարուիլ:

Կանուխէն ըսած ըլլամ որ Աճառեան, Կ. Պոլիս ծնած եւ սակայն իր կեանքը լիովին ապրած Հայաստան, իր լեռն մահու հրատարակուած «Արմատական Բառարան»ի չորս հատորեակին մէջ գործածած է հարազատօրէն Մեսրոպեան դասական ուղղագրութիւնը որուն շնորհիւ ծաղկած է արեւմտահայերէնը մինչեւ մեր ժամանակները՝ հիմք ունենալով չիշեալ Բառարանը:

Հակառակ Սովետական բռնատիրութեան որուն ճնշումին տակ կազմալուծուեցաւ դասական ուղղագրութիւնն ու բառամթերքը, Հրաչեայ Աճառեան անոնց քիթին տակ գրեց անվարան ու վճռական 40 էջերու վրայ իր Ներածականը, ո՛չ մէկ բառ այլանդակուած, այլ ընդհակառակը ամբողջ ներածականն ու Բառարանի հազարաւոր բառերը ստուգաբանուած ամենայնոքին բացատրութիւններով իրենց ճշգրիտ ուղղագրութեամբ: Երբ մեր մեծագոյն գիտնական լեզուաբանը այդ դիրքը բռնած է, այլեւս ուրիշ առարկութիւն ոչինչ արժէ:

Հայերէն լեզուի արեւելահայ եւ արեւմտահայ բարբառները իրենց երջանիկ գոյակցութիւնը պահեցին որքան ատեն որ մեր լեզուի դասական ուղղագրութիւնը հիմքը կազմեց երկու ճիւղերուն: Հ. Աճառեան իր չիշեալ կոթողային գործը հրատարակեց 1926 թուին ապակետիպ, եւ ապա լեռն մահու չորս հատորներով Երեւանի Պետական Համալսարանը հրատարակեց գաւնոք 1974 թուին:

## Հայրենիքին Ստեղծ

Փարիզի Սորպոնի Համալսարանի ուսուցչապետ Անթուան Մէյնէն եւ Գերմանիոյ Սթրասպուրկի Համալսարանի յայտնի լեզուաբան Հայրենի Հիւրըման բարձր գնահատութեամբ հրաւիրած են Աճառեանը դասախօսելու, բացառիկ յաջողութեամբ աւարտելէ ետք գոյգ համալսարաններու լեզուաբանական ճիւղը: 1898 թուին Աճառեան հայրենիք գաղթելով ուսուցիչ կարգուած է էջմիածնի Գեորգեան շրջանը ձեռնարանին, ու ապա դասախօս՝ Երեւանի Պետական Համալսարանին, ապրելով ցկեանս Հայ-

րենիքի մէջ մինչեւ 1953:

## Գործին Դասաւորումը

«Արմատական Բառարան»ի բովանդակած եւ ստուգաբանուած հայերէն բառերու թիւը հասած է 5062-ի որ ինքնին կը վկայէ այն մասին թէ հեղինակը կարողացած է հայերէն լեզուի ստուգաբանութեան լիակատար հաւաքածոն պատրաստել միշտ նկատի ունենալով հետզհետէ զարգացող տարբեր գաւառաբարբառները: Գործին դասաւորումը Աճառեան սկսած է բառերու ծագումի պատմութենէն, եթէ բնիկ են եւ կամ փոխառեալ, որոնցմէ առաջինները մեզի ժառանգմանցած են ուղղակի հնդեւրոպական նախալեզուէն եւ կազմած հայերէնի նախնազոյն տարբերքը: Իսկ փոխառեալները, ըստ մեծ լեզուաբանին, իրանական, ասորական եւ վրացական լեզուներէն:

Գիտականօրէն սակայն Աճառեան հայերէն բառերը չորս խումբերու վրայ բաշխած է, գանոնք կոչելով «բնածայն, հայկերտ, անստոյգ, եւ աղճատեալ» որոնք, կ'ըսէ, նորագիտ ձեռագիրներու ընթացքով եւ բանասիրական քննութիւններով բարեփոխուած են: Աճառեան մեր հին մատենագիրներու ստուգաբանութիւնները գնահատած է մեծագոյն մասամբ որպէս գիտական, բացառապէսով մատենագիրներուն հայերէն լեզուի նկատմամբ անոնց ունեցած հմտութիւնն ու բառերու ճշգրիտ գործածութիւնը: Անոնցմէ լաւագոյն օրինակը իմ կարծիքով կը հանդիսանայ հինգերորդ դարու Եզնիկ կողացիի «Եղծ Աղանդոց» գիրքը ուր գրաբարը գերազանցօրէն կը փայլի իր բառամթերքով եւ ճշգրտութեամբ:

## Գաւառաբարբառներուն Նպաստը

Հայերէն լեզուի գաւառական ակունքներէն եկած բարբառները եւս դասաւորած է Փրոֆ. Աճառեան, քննելով իւրաքանչիւրին արմատն ու անոր ստացած այլազան գործածութիւնը: Այդ խրթին աշխատանքը կատարած է «ճամբորդելով քաղաքէ քաղաք» եւ կազմելով բարբառներուն ամբողջական բառացանկը: Իսկ այն բաժինը որ կը վերաբերի հակառակ ուղղութեամբ հայերէն լեզուէն փոխառեալ բառերուն, նպատակ ունի պարզելու հայերէնի ազդեցութիւնը շրջակայ օտար լեզուներուն վրայ: Աճառեան շեշտակի կերպով կը գրէ թէ մէկ կողմէն գիտնականները գրադեր են հայերէն լեզուի ծագումն ու զարգացումը ուսումնասիրելով, անդին «ո՛չ մէկը չէ հետաքրքրուած թէ հայերէնն էլ ուրիշներէ վրայ ինչ ազդեցութիւն է գործել»: Վերջապէս մեծ գիտնականը քննելով հայոց դրացի լեզուները՝ քրտերէնը, եբրայեցերէնը, արաբերէնն ու ասորերէնը, տեսած է որ ասոնք եւս «հայերէնից բաւական ազդուած են»:

## «Արմատական Բառարան»ը

Այս պատկառելի չորս հատորեակը իսկականին մէջ հայերէն բառերու հանրագիտարան մըն է որ բազմակողմանի կերպով կը լուսաբանէ հայերէն բառերուն արմատը, անոնց ծագումը, պատմութիւնը եւ ազդեցութիւնը: Աճառեան այս շատ բարդ խնդիրը կրցած է հայերէն լեզուի յատուկ հնչիւնական օրէնքներու հիմամբ հաս-

տատել, ցոյց տալով աշխարհին անոր պատմական ընթացքը, վաւերական եւ գրաբար լեզուի հիմքերուն վրայ կառուցուածքը, հաստատելով միանգամայն որ մեր լեզուի քերականութիւնն ու ուղղագրութիւնը իրենց սկիզբը առած են գերագոյն եւ գերազանց «Դասագիրք»էն՝ Աստուածաշունչ Մատենանէն:

Աճառեան կարեւորութեամբ կը գատորոշէ անոնց բառագիտութիւնը, որուն մէջ կ'իջնան բառին արմատը, հոլովման եւ խոնարհումին ձեւերը, բառին նշանակութիւնը եւ ածանցները: Յաջորդաբար կը քննարկէ բառերուն քերականական, իմաստաբանական եւ կիրառման կառուցները, միշտ հաւատարիմ մնալով մեր նախնեաց մատենագրութեան գործածութիւններուն: Յաջորդ քայլը կ'ըլլայ ստուգաբանութիւնը ինքնին, ուր Աճառեան կը գերազանց օտար լեզուաբանները, «հաւաքելով հայերէնի ստուգաբանութեան բնագաւառում կուտակուած ամբողջ նիւթը եւ սպառիչ ամբողջութեամբ ներկայացնել հայերէնի ստուգաբանութիւնը» ինչպէս կը կարգանք ներածականին մէջ:

Ինչպէս Աճառեանի աշակերտը, յայտնի գիտնական էդիկ Աղայեան գրած է «Բառարան»ի յառաջաբանին մէջ «Անհնարին է պատկերացնել որեւէ բառագիտական հետազոտութիւն առանց այս Արմատական Բառարանի պարունակած նիւ-



Թերը լիովին հաշուի առնելու»:

## Եզրափակում

Եթէ հայերէն լեզուի հիմնաբարը Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակ կառուցին, անոր պատմական եւ գիտական ընթացքը ստուգապէս վերահաստատեց Հրաչեայ Աճառեան: Որքան կը պարտինք հայերէն գրաւոր եւ գրական լեզուի հիմքը թարգմանիչ վարդապետներուն եւ յաջորդող դարերու հոյ մը պատմագիրներուն, գլխաւորութեամբ երկու Մեծ Սուրբերուն, նոյնքան կը պարտինք մեծ լեզուաբան Հրաչեայ Աճառեանի արդի հայերէնին կատարեալ կառուցը՝ հաւատարմօրէն շարունակուած իր դասական ուղղագրութեամբ:

## Փոքր-Ինչ Ժպիտ Իմ Կեանքից...

### Շարունակուած էջ 14-էն

փոխած ենք այդ նոտան: Մատիտ մը տուր շտկեմ սա չըլլալիք ՖԱ-ն:

Ռիթման պայուսակից հանում է գրիչը ու մեկնում ինձ, եւ, որովհետեւ, առաջին շարքում է նստած, ծունկի եմ գալիս առջեւը, նոտատետրը դնում եմ ծնկների վրայ եւ փորձում ՖԱ նոտան փոխել ՍՈՒ-ի: Գրիչը չի գրում, մի քանի անգամ փորձում եմ՝ չի գրում եւ վերջ: Մեռելային լուծութիւն է սրահում: Նոտան շտկելու մի քանի անյաջող փորձերից յետոյ ոտքի եմ կանգնում: Բոլորի ջղերը պրկուած են, ամէն մարդ գգում է, որ ինչ որ մի բան պիտի պայթի:

- Ռիթմ, քուկին ամէն բանդ ասա՞նկ կ'աշխատի...,- գայրացած ասում եմ ես:

Մի անգամից անգուսպ խնդուք-ծիծաղով պոռթկում է սրահը, իսկ ինքը՝ Ռիթման, շուարուն, քարացած, փոքր ուշացումով անդրադառնում է եղածին եւ ինքը նոյնպէս միանում է ընդհանուրի անբռնազբոս ծիծաղին:

Ինձ մնում է փրկել ակամայ ստեղծուած հոմոնորային իրավիճակը ու ազդարարել:

- Դադա՛ր,- բղաւում եմ ու դուրս գալիս սրահից՝ աւարտուած համարելով ստեղծուած հաճելի իրավիճակը:

\*\*\*

- ԲԱՅՈՒԵՑ բառից յետոյ ի՞նչպէս կարելի է շունչ վերցնել, դիմում եմ ՍԻՓԱՆ երգչախմբի անդամներին՝ «Անուշ» օպերայի փորձի ժամանակ: Ինչպէս բանաստեղծութեան, այնպէս էլ երգի մէջ սրամաբանութիւն պիտի լինի: Բացուեց ի՞նչը՝ դու՞ւրը, պատուհա՞նը:

- Շի՛շը,- բասերի խմբից բղաւում է Սուրէնը, որ քիչ միչ թուլութիւն ունի խմիչքի նկատմամբ:

- Մէկի համար շիշը, միւսի համար թէրեւս մի ուրիշ բան,- միջադէպը փակուած համարելով աւելացնում է Նուէրը, բայց մէկ ուրիշ երիտասարդ տենորների խմբից բարձրաձայնում է.

- Պայծառին սրունքն է՛րը...

Բնական է՝ փորձը խանգարում է, ես էլ եմ միանում ընդհանուր խնդուքին եւ ոգեւորութեանը ու՝

- Դադար 15 վայրկեան:

\*\*\*


Նշանաւոր մտաւորական, լրագրող Օշին Քէշիշեանը յոբելեանական երեկոյիս ժամանակ, հասցէիս ուղղուած բաւական դրուատալից խօսքերի աւարտին ասաց, որ «Հենրիկ Անասեան, արուեստագէտ-երաժիշտ ըլլալով հանդերձ, նորութիւն բերաւ մեր գրականութիւնէն ներս, որ է՝ «Երաժշտական պատմութեամբ»ի ժանրը:

Բաւական տարիքոտ գրոց-բրոցներից մէկը երեկոյի դադարի ընթացքին, առանձինն գտնելով ինձ, բեմի ետեւում՝ ասաց.

- Ի՞նչ էք գրել որ Պարոն Անասեան, դուք երաժիշտ-յօրինող էք, դա է ձեր մասնագիտութիւնը: Ձեր գրած գործերը ես մէկ գիշերուայ ընթացքում կարող եմ կարդալ եւ վերջացնել:

- Ամենայն յարգանք տածելով ձեր տարիքի հանդէպ, ներողամիտ եղէք, եթէ սասմ որ ես կարող եմ մէկ գիշերուայ մէջ գրել այն ամէնը՝ ինչ որ դուք «գրել» էք ձեր ողջ կեանքի ընթացքին,- պատասխանեցի ու շարժուեցի դէպի բեմ՝ շուար ու արձանացած վիճակում թողնելով ծերուկին:

# Աստուածաշունչ Մատեանի Հնատիպ Հրատարակութիւններու Ցուցադրութիւն ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդանիստ Մայր Տաճարին Մէջ



1512 թուականէն ի վեր, երբ ստեղծուեցաւ հայերէն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք» աղօթագիրք-բժշկարանը, մեր ժողովուրդը գրատպութեան գերհարուստ ժառանգութիւն կուտակած է: Այդ առիթով տեղին է ըսել, որ հայ գրատպութեան 500-ամեայ յօբելանսի օրերուն Արեւմտեան թեմը Յովնան Արք. Տէրտէրեանի առաջնորդութեամբ պատրաստեց եւ հրատարակեց «Ուրբաթագիրք» բնագիրը՝ գուգադիր աշխարհաբար թարգմանութեամբ:

Հաստիպ հայ գրքերու մէջ իրենց արուեստով ու նշանակութեամբ կարեւոր են յատկապէս Աստուածաշունչի ամբողջական կամ մասնակի հրատարակութիւնները: Սուրբ Գրքի տպագրութիւնը հնարաւորութիւն տուաւ, որպէսզի Աստուծոյ խօսքը առաւել մեծ քանակով տարածուի հաւատացեալներու մէջ, հասանելի դառնայ առաւել լայն շերտերուն եւրոպայէն մինչեւ Հայաստան, Պարսկաստան, Հնդկաստան եւ այլուր:

Տպագիր Աստուածաշունչ գրքերու հարուստ հաւաքածոյ ունի ԱՄՆ Արեւմտեան թեմը: Տարիներու ընթացքին, թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի անմիջական նախաձեռնութեամբ Առաջնորդարանին մէջ մէկտեղուած եւ երկիրղածութեամբ պահպանուող այդ գրքերու մէջ կան բոլոր ժամանակներու ամենահեղինակաւոր հրատարակութիւնները, ինչպէս օրինակ՝

• Միխիթար Սեբաստացիի հրատարակած Աստուածաշունչը (1733 թ.), որ կազմուեր է լաւագոյն միջնադարեան ձեռագրերու համեմատութեամբ,

• Յովհաննէս Զոհրապեանի պատրաստած՝ Աստուածաշունչ հրատարակութիւնը (1805 թ.)՝ ծանօթագրութիւններով, բազմաթիւ ձեռագրերու համեմատութիւններով,

• Արսէն Բագրատունիի պատրաստած՝ Աստուածաշունչի քննական հրատարակութիւնը (1860 թ.) եւ այլն, որոնք մինչ օրս հիմք եւ օրինակելի բնագիր կը դառնան հայերէն Ս. Գրքի այլեւայլ հրատարակութիւններու համար:

Արեւմտեան թեմի Առաջնորդարանը հայ հնատիպ գրքի իւրատեսակ շտեմարան մըն է, եւ հնատիպ մեր այս գրքերը կը շարունակուին լոյս ճառագել, որուն առնչուելու պատեհութիւն ստեղծուեր է այժմ բոլորիս համար:

Յոյժ արժէքաւոր Աստուածաշունչ գրքերը, Սրբոց Թարգմանչաց տօնի կապակցութեամբ լայն ցուցադրութեան կը ներկայացուին 2020 թ. Հոկտեմբերի 11-ին, Առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, Ս. Պատարագից անմիջապէս յետոյ:

Աստուածաշունչ մատեանի հնատիպ հրատարակութիւններու ցուցադրութեան ժամանակ, Գերշ. Յովնան Արք. ընկերակցութեամբ, պիտի ըլլան բանախօսութիւններ, մտքերի փոխանակութիւններ:

# Փաստենաի Հայկական Գեմարանը Տօնեց Հայաստանի Անկախութեան 29րդ Տարեդարձը



21 Սեպտեմբեր 2020, Երկուշաբթի օր, Փաստենա քաղաքի Պլենհանրային վարժարանի նորաբաց Հայկական Գեմարանի աշակերտները տօնեցին Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 29րդ տարեդարձը:

Տօնական այս առիթով հայկական Գեմարանի աշակերտները կազմակերպեցին յատուկ յայտագիր մը: Յայտագիրը կատարուեցաւ առցանց:

տուհի Լիա Մախուլեանը, որ ամիս մը առաջ Հայաստանէն Պլեն վարժարան եկած է աշակերտներու փոխանակման յատուկ IB ծրագրով: Ան ձեմարանի միակ աշակերտն է, որ ծնած ու հասակ նետած է անկախացած Հայաստանի մէջ: Լիա Մախուլեանը իր յուզիչ խօսքին մէջ իր դասընկերներուն բացատրեց, թէ ինչպէս է կեանքը անկախ Հայաստանի մէջ: Ան անկախութիւնը համեմատեց ազատ շնչառութեան հետ: Աշակերտ-



Բացման խօսքերը կատարեցին Գեմարանի ուսուցիչներ՝ Նորայր Տատուրեանը եւ ձենի Եսայեանը: Ապա, աշակերտները կատարեցին երգեր, արտասանութիւններ, սրտի խօսքեր: Գրդ կարգէն էլ են վարդանեանը եւ 11րդ կարգէն Ալին Ֆրիսարը ներկայացուցին Հայաստանի վերանկախացման պատմական հանգամանքները: Անոնք տուին նաեւ հանրապետութեան մասին վիճակագրական բազմաթիւ եւ հետաքրքրական տուեալներ: Անկախ հանրապետութեան մը խորհրդանշանները ներկայացուց է. վարդանեանը, իսկ Ա. Ֆրիսարը մանրամասնօրէն նկարագրեց Հայաստանի Հանրապետութեան գինանշանը: Տրդ կարգէն Աննա Պապիկեանը արտասանեց Միքայէլ Նալպանդեանի «Ազատութիւն» բանաստեղծութենէ հատուածներ, 12րդ կարգէն Դաւիթ Աբիկեանը երգեց Արարատն Առաջե (Արդեօք ովքեր են) եւ «Մենք Քաջ Տոհմի Զաւակներն ենք» երգերը, 10րդ կարգէն Սերժ Պոյաճեանը եւ 11րդ կարգէն Պրէնտըն Քալանը տուին հայրենասիրութեան եւ անկախութեան բարձր գաղափարներուն նուիրուած խօսքեր: Խօսք առաւ նաեւ 12րդ կարգի աշակեր-

ները դիտեցին նաեւ Հայաստանի անկախութեան առիթով Երեւանի Հանրապետութեան հրապարակի վրայ կատարուած գինուորական տողանցքէն ներշնչող տեսարաններ, ինչպէս՝ «Հրացաններու պարը»: Տեղի ունեցաւ լուսանկարներու ցուցադրութիւն մը, որու համար աշակերտները Արարատի ուրուագիծը լիչեցնող տեսարաններ լուսանկարած էին իրենց անմիջական շրջապատէն: Յուցահանդէսը անուանուած էր՝ «Արարատը ամէն տեղ է»: Հայաստանի քայլերդի կատարումով սկսած այս յայտագիրը վերջացաւ Տէրունական աղօթքով: Վարժարանի երկու ուցուցիչները հանրային վարժարանի մէջ սկսած են հայեցի դաստիարակութիւն տալ, թէ՛ հայորդիներուն, եւ թէ՛ այն օտար աշակերտներուն, որոնք կը փափաքին հայոց լեզուին եւ մշակույթին ծանօթանալ: Հայկական Գեմարանի աշակերտները Հայաստանի հանրապետութեան կը մաղթեն յաւերժ խաղաղութիւն եւ բարգաւաճում, «Մտուղդ շնորհաւոր, Հայաստան»: Գաղտնագրութիւն՝ Պլեն վարժարանի Հայկական Գեմարան

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State: ----- Zip Code: -----  
 Country: -----  
 Tel: ----- Email: -----



### Հայաստանի Կառավարութեան Օժանդակութիւնը Կը Հասնի Հոմսի Հայ Ընտանիքներուն



Ուրբաթ, 18 Սեպտեմբեր 2020-ին, Հոմսի Սուրբ Մեսրոպ եկեղեցւոյ շրջափակին մէջ՝ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան կողմէ տրամադրուած նիւթական օժանդակութիւնը բաշխուեցաւ Հոմսահայ ընտանիքներուն:

Հոմսի հայութեան օժանդակութեան բաշխումը կատարուեցաւ գլխաւորութեամբ Դամասկոսի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանի: Ներկայ էր նաեւ Հոգ. Տ. Աղան Աբեղայ Երնջակեանը:

Հանդիպման սկզբին Սրբազան Հայրը նախ ողջունեց ներկաները եւ հանդէս եկաւ օրհնութեան խօսքով: Առաջնորդ Հայրը ըսաւ. «Նկատի առնելով Սուրիահայութեան դժուարին պայմանները Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան որոշումով նիւթական օժանդակութիւն կը տրամադրուի Սուրիահայ ընտանիքներուն ընդհանրապէս, իսկ այսօր ալ Հոմսահայ ընտանիքներուն մասնաւորապէս: Հայաստանը միշտ սուրիահայութեան կողքին է: Հայաստանի Հանրապետութեան կը

յայտնենք մեր երախտագիտութիւնը, որ միշտ զօրակից է Սուրիահայութեան»:

Բաշխումը տեղի ունեցաւ Հոմսի Սուրբ Մեսրոպ եկեղեցւոյ թաղականութեան անդամներու՝ տեարք Վազգէն Խաչատուրեանի, Գէորգ Գէորգեանի եւ Մինաս Թիւլպեանի կազմակերպութեամբ, որոնք նախ կատարեցին ընտանիքներուն արձանագրութիւնը եւ ապա տրամադրեցին օժանդակութիւնը: Այս ծրագիրով Հոմսի 100 հայ ընտանիքներ՝ կտորներու դրութեամբ կարելիութիւն պիտի ստանան պայմանաւորուած խանութներէն գնումներ կատարելու եւ ապահովելու իրենց սնունդի, դեղորայքի, մաքրութեան եւ այլ անհրաժեշտ պարագաները:

Յիշեցնենք, որ նախորդիւ Դամասկահայ ընտանիքներ եւս ստացած էին ՀՀ Կառավարութեան օժանդակութիւն: Այսպիսով Դամասկոսի Հոմսահայ ընտանիքներ եւս ստացած են ՀՀ Կառավարութեան օժանդակութիւնը բաշխուեցաւ 300 ընտանիքներու: Դիւան Ազգ. Առաջնորդարանի, Դամասկոս

### 2020-ի «Աւրորա» Մրցանակի Դափնեկիրներն են Ֆարթուն Ատանը եւ Իլուատ Էլմանը



«Աւրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը հինգերորդ «Աւրորա» համաշխարհային մարդասիրական տարեկան մրցանակը կը շնորհէ Ֆարթուն Ատանին եւ Իլուատ Էլմանին. մայր եւ դուստր Սոմալիի մէջ կը դեկավարեն «էլման» խաղաղութեան եւ մարդու իրաւունքներու կեդրոնը: Որպէս «Աւրորա» մրցանակի դափնեկիրներ, անոնց կը շնորհուի 1 միլիոն տոլար պարգև, ինչ որ բացառիկ հնարաւորութիւն կու տայ շարունակելու մարդասիրութեան շղթան եւ աջակցելու գիրենք ոգեշնչած մարդասիրական կազմակերպութիւններուն, ըսուած է «Աւրորա» մարդասիրական նախաձեռնութեան հաղորդագրութեան մէջ:

Ֆարթուն Ատանը եւ Իլուատ Էլմանը ընտրած են երեք կազմակերպութիւն՝ "Love Does", «Փան-

զի» հիմնադրամ եւ «Փրօճվալա», որոնք կը պայքարին ազատութեան եւ մարդու իրաւունքներուն համար, առաջնային բուժօգնութիւն կը տրամադրեն լուսանցքային խումբերուն եւ կը փրկեն սեռական թրաֆիքինգի զոհեր: Այս կազմակերպութիւններն ալ կը դառնան մէկ միլիոն տոլար մրցանակի շահաւուները:

Ֆարթուն Ատանը եւ Իլուատ Էլմանը ընտրուած են 2020 թուականի «Աւրորա»-ի հերոսներէն, որոնք յայտարարուեցան Ապրիլ 24-ին: Բացի սոմալացի իրաւապաշտպաններէն, բացառիկ հերոսներու կարգին էին նաեւ քոնկոցի աքթիւիսթ՝ Անժելիք Նամայքան, փախստականներուն բաց ծովէն փրկող՝ Սոֆի Պոն եւ Քլաուս Ֆոկելը եւ աֆղանիստանցի մանկավարժ՝ Սաքինա Եակուպին:

### Մարիա Զախարովան Մեկնաբանած Է Լիբանանահայերու՝ Արցախ Տեղափոխուելու Վերաբերեալ Տուեալները

Մոսկուան չունի ստուգուած տուեալներ «լիբանանցի փախստականներու, դէպի Լեռնային Ղարաբաղ եւ անոր շրջակայ տարածքը հոսքի վերաբերեալ»: Այս մասին յայտարարած է Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ՝ Մարիա Զախարովան:

«Մենք լսած ենք Լեռնային Ղարաբաղի տէ ֆաքթօ իշխանութիւններու՝ Լիբանանը լքած հայերուն, վերահսկող տարածքները բնակեցնելու մտադրութեան մասին: Մենք կարողացած ենք հաղորդումներ աչն մասին, որ լիբանանեան երկու ընտանիք ցանկութիւն յայտնած է բնակութիւն հաստատել Ղարաբաղ: Մենք չունինք ստուգուած տուեալներ լիբանանցի փախստականներու հոսքի մասին դէպի Լեռնային Ղարաբաղ եւ անոր շրջակայ տարածք», - նշած է Զախարովան:

Ըստ Զախարովային՝ Մոսկուան կը հիմնուի դարբաղեան հիմնախնդրի լուծման ուղղուած բանակցային գործընթացի վերահսկման վրայ կեդրոնանալու անհ-



րաժեշտութեան վրայ, անոր կարգին՝ փախստականներու եւ տեղահանուած անձերու խնդիրներուն տարածաշրջանին մէջ: Ան յիշեցուցած է, որ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահները Սեպտեմբեր 14-ին հեռախօսային խորհրդակցութիւններ կատարած են Հայաստանի եւ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարներուն հետ եւ անոնց փոխանցած քայլերը շարունակելու միջնորդներու առաջարկներէն իւրաքանչիւրի հետ առանձին հանդիպումներ կատարելու: «Մենք կ'ակնկալենք կողմերու դրական արձագանգը», - ըսած է Զախարովան:

**Նուիրատուութիւն**

Ընկեր Տիրան ձերէճեան բարձր գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի «Մեր Անկիւնէն» բաժնի այժմէական հարցերու լուսաբանութիւններն ու ողջամիտ մեկնաբանութիւնները 100 տոլար կը նուիրէ մեր օրկանին:

### «Լիւերփուլը» Յաղթեց «Չելսիին»՝ 2-0



Անգլիոյ առաջնութեան երկրորդ օրուայ կեդրոնական մրցումին Լոնտոնի «Չելսին» ընդունեց ախոյեան «Լիւերփուլին»: Անգլիացի Ֆրենկ Լեմպարդի գլխավորած խումբը պարտութիւն կրեց 0:2 հաշուով: Առաջին խաղակէսի աւելցուած ժամանակի ընթացքին սենեգալցի յարձակող Սադիո Մանէի նկատմամբ վերջին յոյսի խախտման համար կարմիր քարտ ստացաւ «Չելսիի» դանիացի պաշտպան Անդրէաս Կրիստենսենը:

Գերմանացի Յոլրգեն Կլոպի գլխավորած «Լիւերփուլը» թուային առաւելութիւնը կոլերու վերածեց երկրորդ խաղակէսի ընթացքին: Չորս ըրպէի ընթացքին երկու կոլի հեղինակ դարձաւ Սադիո Մանէն: Վերջնամասի ընթացքին «Չելսին» ունէր հաշիւը կրճատելու հնարաւորութիւն, սակայն իտալացի կիսապաշտպան Ժորժինիոն արդիւնաւէտ չիրականացուց 11 մեթրանոց հարուածը:

«Լիւերփուլը» 6 միաւորով հաւասարեցաւ առաջատարներ «Էվերթընին», «Արսենալին» եւ «Քրիսթալ Փելասին»: «Չելսին» 3 միաւորով 10-րդ տեղը կը գրաւէ:

### «Լեսթերը» Յաղթեց Եւ Գլխավորեց Մրցաշարային Աղիւսակը

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան երկրորդ օրուայ ընթացքին «Լեսթեր Սիթին» իր դաշտին մէջ խաղցաւ «Բարնլիի» հետ: Հիւսիսիւրանդացի Պրենդան Ռոջերսի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 4:2 հաշուով:

«Լեսթեր Սիթին» 6 միաւորով հաւասարեցաւ առաջատարներ «Էվերթընին», «Արսենալին», «Լիւերփուլին», «Քրիսթալ Փելասին» եւ կոլերու լաւագոյն տարբերութեամբ (7:2) գլխավորեց մրցաշարային աղիւսակը:

### «Ռեալը» Միաւորներ Կորսնցուց Սան Սեռաստիանի Մէջ

Սպանական բարձրագոյն լիգայի նոր մրցաշրջանի առաջին հանդիպումը տեղի ունեցաւ ախոյեան Մատրիտի «Ռեալը»: Երկրորդ օրուայ ընթացքին ֆրանսացի Զինէտին Զիտանի գլխավորած խումբը Սան Սեռաստիանի մէջ մրցեցաւ «Ռեալ Սոսյետատի» հետ եւ բաւարարութեամբ 1 միաւորով: Դարպասի գրաւում տեղի չունեցաւ:

«Ռեալ Սոսյետատը» 2 խաղէն յետոյ 2 միաւորով 9-րդն է: «Ռեալը» 1 խաղէն յետոյ 10-րդն է՝ 1 միաւոր:

Առաջատարներն են 6-ական միաւոր վաստակած «Կրանատան» ու «Պետիսը»:



### Լուիս Սուարես Զամաձայնութեան Եկած Է Մատրիտի «Աթլետիկոյին» Զետ

«Պարսելոնայի» ուրուկուացի յարձակող Լուիս Սուարես համաձայնութեան եկած է Մատրիտի «Աթլետիկոյին» հետ երկու տարուայ պայմանագիր կնքելու հարցով:

Կատալոնական ակումբը պատրաստ է փոխհատուցել 33-ամեայ ֆուտպոլիստի աշխատավարձը մինչեւ մրցաշրջանի աւարտը: Լուիս Սուարեսի պայմանագիրը «Պարսելոնայի» հետ նախատեսուած է մինչեւ 2021թ. Յունիսը: Ան կը ստանայ տարեկան 14 միլիոն եւրօ: Ակումբը պայմանագրի վաղաժամ միակողմանի խզման համար կ'առաջարկէ 7 միլիոն եւրօ, Սուարես կը պահանջէ ամբողջ գումարը:

Այժմ Մատրիտի «Աթլետիկոն» պէտք է վաճառէ յարձակող Տիեկո Կոստային, որպէսզի ֆինանսապէս կարողանայ ձեռք բերել Լուիս Սուարեսին եւ վճարել անոր աշխատավարձը:



### «Ռոման» Չյաղթեց Վերոնայի Մէջ



Իտալիոյ առաջնութեան մեկնարկային օրուայ ընթացքին «Ռոման» հիւրընկալութեամբ «Վերոնային»: Փորտուկալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխավորած խումբը բաւարարութեամբ ոչ ոքի արդիւնքով: Դարպասի գրաւում տեղի չունեցաւ՝ 0:0:

«Ռոմայի» մեկնարկային կազմին մէջ էր Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որ պոստիացի յարձակող էրին Ջեկոյի բացակայութեամբ հանդէս եկաւ կեդրոնական յարձակողի դիրքին վրայ: Ան ունեցաւ մի քանի կոլային հնարաւորութիւն, սակայն արդիւնաւէտ չօգտագործեց անոնք: Մխիթարեան կատարեց ամբողջ հանդիպումը:

Երկրորդ շաբթուայ մրցումներուն գծով «Ռոման» Սեպտեմբեր 27-ին կ'ընդունի ախոյեան «Եուվենտուսին»:

### «Եուվենտուս» Սկաւ Յաղթանակով

Անդրէա Պիրլոյի նորամուտը իտալիոյ առաջնութեան մէջ ախոյեան թուրինի «Եուվենտուսի» նորանշանակ գլխավոր մարզիչի կարգավիճակի մէջ յաղթական էր:

«Եուվենտուս» իտալացի մասնագէտի ղեկավարութեամբ Ա. Սերիայի առաջին օրուայ խաղի ընթացքին ընդունեց «Սամպորիային» եւ յաղթեց 3:0 հաշուով:

Հանդիպման հաշիւը 13-րդ ըրպէին բացաւ Շուեդիան ներկայացնող 20-ամեայ կիսապաշտպան Դեյան Կուլուշեակին, որ անցած մրցաշրջանը վարձակալութեամբ կը խաղար «Պարմայի» կազմէն ներս:

«Եուվենտուսի» առաւելութիւնը կրկնապատկեց իտալացի պաշտպան Լեոնարդօ Բոնուչին: Նախավերջին ըրպէին փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն նշանակեց դաշտի տէրերու երրորդ կոլը:



### Տիեկո Ռոսի Մարաշլեան Զրաւիրուած Է Ուրուկուայի Զաւարական

Հայկական արձատներով ուրուկուացի յարձակող Տիեկո Ռոսի Մարաշլեան հրաւիրուած է Ուրուկուայի ազգային հաւաքական: 2022թ. աշխարհի առաջնութեան ընտրական փուլին մէջ Ուրուկուայի հաւաքականը Հոկտեմբերի 8-ին կը մրցի Զիլիի, իսկ Հոկտեմբերի 13-ին՝ Էկուատորի խումբերուն հետ:

MLS-ի ընթացիկ մրցաշրջանի ընթացքին 22-ամեայ յարձակողը դարձած է 4 կոլի հեղինակ:



### Եւ. «Արարատ-Արմենիա» - «Ցելէ» Զոյգի Յաղթողը Պիտի Մրցի «Ցրվենա Զվեզդայի» Զետ

Տեղի ունեցած է ֆուտպոլի Եւրոպայի լիգայի վլէյ-օֆֆի վիճակահանութիւնը: Հայաստանի ախոյեան «Արարատ-Արմենիայի» եւ սլովենական «Ցելէի» մրցումին յաղթողը իմբային փուլի ուղեգրի համար պիտի մրցի սերբական «Ցրվենա Զվեզդայի» հետ:

Փլէյ-օֆֆի հանդիպումները տեղի կ'ունենան Հոկտեմբեր 1-ին: Որակաւորման երրորդ փուլի «Արարատ-Արմենիա» - «Ցելէ» հանդիպումը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 24-ին Երեւանի մէջ:



### ՖԻՖԱ. Հայաստանի Հաւաքականն Յառաջադիմած է



Հայաստանի ազգային հաւաքականը Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) դասակարգման աղիւսակին մէջ յառաջադիմած է մէկ աստիճան եւ կը զբաղեցնէ 101-րդ տեղը:

Նախորդ հրապարակումէն յետոյ Հայաստանի հաւաքականը ունեցած էր 2 հանդիպում՝ Ազգերու լիգայի զօով պարտուելով Հիւսիսային Մակեդոնիայէն (1:2) եւ յաղթելով Էստոնիային (2:0):

ՖԻՖԱ-ի դասակարգման առաջատարը կը շարունակէ մնալ Պելճիքայի հաւաքականը, իսկ աշխարհի գործող ախոյեան Ֆրանսան մնացած է երկրորդ տեղը: Լաւագոյն եռեակը կ'եզրափակեն պրագիլացիները: Լաւագոյն տասնյակին մէջ են նաեւ Անգլիան, Փորթուգալը, Ուրուկուէյը, Սպանիան, Խորուաթիան, Արժենթինը ու Գոլումպիան:

Ազգերու լիգային մէջ Հայաստանի հաւաքականի մրցակիցներէն Հիւսիսային Մակեդոնիան 66-րդն է, Վրաստանը՝ 89-րդը, իսկ Էստոնիան՝ 108-րդը:

Ազգերու լիգային մէջ Հայաստան իր յաջորդ հանդիպումը կ'անցկացնէ Հոկտեմբերի 8-ին՝ ընդունելով Վրաստանի հաւաքականին:

### Հայկական Ֆուտպոլի Երկրպագուները Կը Վերադառնան Մրզադաշտ

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան իրաւունք ստացած է սոյն թուականի Սեպտեմբեր 18-էն սկսեալ թոյլատրել Հայաստանի Բարձարագոյն Լիգայի, Առաջին խումբի եւ Հայաստանի գաւաթի խաղարկութեան մասնակից իւրաքանչիւր ակումբէն 75 հանդիսականի մասնակցութիւն հանդիպումներուն (ընդամենը՝ 150 անձ), կը հաղորդէ ՀՖՖ մամուլի ծառայութիւնը:

### «Տոսիէ». Ռուսաստանը Գործակալներ Ունի

Շարունակուած էր 7-էն

«Այնպէս կ'երեւի Փաշինեան իր չափերը չի ճանչնար, տէ, տէ, սպասենք, տեսնենք, ինչպէս պիտի սայթաքի: Եւ շնորհակալութիւն յայտնենք իրեն, որ մէկ անգամէն այսքան արեւմտամէտ ձրիակերներ բացայայտեց»:

Ըստ «Տոսիէ»-ի ռուսումնասիրած փաստաթուղթերուն, գործակալ Մաքսիմովան կը հետեւի նաեւ հայաստանեան այլ, իրենց բնորոշումով՝ արեւմտամէտ քաղաքական գործիչներու, օրինակ՝ Հանրային խորհուրդի ղեկավար՝ Ստեփան Սաֆարեանին:

Փաշինեանի մասին Քրեմլինի տեղեկագիրները կ'ուղարկէ նաեւ մէկ այլ աղբիւր, «Քանտիտաթ» («Թեկնածու») ծածկանունով: Ան գրած է «Փաշինեանը գերծ կը մնայ յետորհրդային միասնութենէն, ան նոյնիսկ չմեկնեցաւ Մոսկուա՝ Յաղթանակի շքերթին մասնակցելու», ուրիշ անգամ ալ՝ թէ Փաշինեանի օրօք «ամերիկամէտ քաղաքական գործիչներ եկած են իշխանութիւն»:

«Ռուսաստանի այդ բարեկամ-գործակալները քողարկուելու ու բացայայտուելու վախ չունին, քանի որ Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութիւնը վաղուց յայտնի է որպէս ռուսականի՝ Լիւպլեանքայի մասնաճիւղ, ղեկավար կազմին մէջ ալ շարունակական փոփոխութիւններ կան ու խառնաշփոթ է, որ կ'ուղեկցուի աղմկոտ պատմութիւններով», - կը նշէ «Տոսիէ»-ն: Այս շարքին հետաքննութիւնը կը չի շատակէ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) նախկին ղեկավար՝ Կէորկի Քուտոյեանը, որ, ըստ նախաքննութեան, ինքնասպան եղաւ այս տարեկազմին, ապա՝ Արթուր Վանեցեանը: «Վերջինս ԱԱԾ-ի որպէս ղեկավար աշխատեցաւ մօտ մէկ տարի, պաշտօնանկութենէն յետոյ դարձաւ Փաշինեանի կոշտ քննադատը, եւ հիմա յաճախ կը տեսնուի Մոսկուա, ազդեցիկ գործարարներու ընկերակցութեամբ», - կը փաստէ «Տոսիէ»-ն:

Ուշագրաւ են նաեւ Հայաստանի երկրորդ նախագահ՝ Ռուպերթ Քոչարեանի իշխանավարման օրօք ԱԱԾ ղեկավար՝ Քարլոս Պետրոսեանի մասին տեղեկութիւնները: Ըստ «Տոսիէ»-ին, մօտ հինգ տարի Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութեան թիւ մէկ պատասխանատուն պաշտօնաթողութենէն անմիջապէս յետոյ Ռուսաստանի քաղաքացիութիւն ստացած է յատուկ կարգով, եւ մինչ այժմ կ'ապրի Մոսկուայի Քոմփոզիթորներու տունը, ուր բնակարան գնած է 200 միլիոն ռուբլով՝ աւելի քան երկուք ու կէս միլիոն տոլարով: Բացի այդ, ըստ «Տոսիէ»-ի, Հայաստանի ԱԱԾ նախկին ղեկավար, գեներալ-լեյտենանտ գորաբանակի գորավար Քարլոս Պետրոսեան նաեւ առանձնատուն ստացած է մերձմոսկովեան Մալախովքայի մէջ, ընդ որում՝ անձամբ նախագահ ֆուլիինի կարգադրութեամբ: Թէ ո՞ր ծառայութիւններու դիմաց՝ դժուար թէ կուսէլ,

քանի որ ֆուլիինի այդ որոշումը գաղտնի եղած է: Յայտնի է միայն, որ այդտեղ՝ Պետրոսեանի հարեանունութեամբ կ'ապրի նաեւ Ռուսաստանի Անվտանգութեան դաշնային ծառայութեան՝ ???-ի նախկին փոխանօրէն, գորավար-գնդապետ Վիքթոր Քոմպոտովը:

Հետաքննութեան մէջ նշուած է նաեւ մէկ այլ ուշագրաւ փաստ. գորավար Չերնովի քարտուղարութեան փաստաթուղթերուն մէջ եղած է նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ՝ Գագիկ Ծառուկեանի անձնագրի պատճէնը: «Ծառուկեանը յաճախ կը գտնուի Մոսկուա, անցեալ տարի փետրուարին իր կուսակցութիւնը համագործակցութեան արձանագրութիւն ստորագրած է Փութինի «Ետինաեա Ռոսիա»-ի հետ», - կը չի շեղէ «Տոսիէ»-ն: «Քրեմլինի այս գործընկերը բաւական բուռն կենսագրութիւն ունի», - կը նշէ հետաքննութիւնն ու կը մանրամասնէ. - «1979-ին խորհրդային ոստիկանութեան ծառայող Ծառուկեան մեղաւոր ճանաչուած է խմբակային բռնաբարութեան համար եւ պատիժը կրած է Նիժնի թակիլի՝ ոստիկաններու համար նախատեսուած կալանավայրը»:


Թէ երբ եւ ինչ նպատակով Ծառուկեանի անձնագրի պատճէնը յայտնուած ու պահուած է Ռուսաստանի Արտաքին հետախուզութեան գորավար Չերնովի թղթապանակը, հետաքննութիւնը չի մանրամասներ, բայց կը փաստէ, որ ան ժամանակին աջակցած էր Փաշինեանին, իսկ հիմա դարձած է անոր գլխաւոր ընդդիմախօսը ու անոր հրաժարականը կը պահանջէ:

Քաղաքական գործիչներէն, ներդրուած գործակալներէն, ռուսամէտ լրագրողներէն ու փորձագէտներէն բացի, ըստ հետաքննութեան, Քրեմլինի հետ սերտօրէն կ'աշխատին նաեւ որոշ հասարակական կազմակերպութիւններ: Անոնցմէ մէկը՝ Լազարեան ակումբը, օրինակ, ձեւաւորուած է Թաւշեայ յեղափոխութենէն յետոյ, ռուսական կողմէն, ըստ «Տոսիէ»-ի, զայն կը համակարգէ Պետտոմայի պատգամաւոր Քոնսթանթին Զատուլինը, անդամակցողներու շարքին են Զորի Պալաեանը, որ տարիներ առաջ նամակ գրած էր նախագահ ֆուլիինին, ու պնդած, թէ Ղարաբաղի հարց չկայ, կայ Ռուսաստանի հարց. Հանրային խորհուրդի նախկին ղեկավար Վազգէն Մանուկեան, ՀՀ նախկին պատգամաւոր Արտաշէս Գեղամեան, որ մինչեւ օրս ամէն շաբաթ ակումբի կայքին մէջ քարոզչական յօդուածներ կը հրատարակէ, որոնցմէ մէկը, օրինակ, այս վերնագրով՝ «Կլոպալիստների նախադիժը Նիկոլ Փաշինեանը, ֆիասթօ ապրեց. ինչ է լինելու յետոյ»:

Ակումբի առաջին լիազուծար նիստին՝ 2018-ի նոյեմբերին, ելույթ ունեցած էր նաեւ Հայաստանի երկրորդ նախագահ՝ Ռուպերթ Քոչարեան: Երկօրեայ այդ հաւաքը, ի դէպ, անցած էր «Հայաստան եւ Ռուսաստան՝ երկու Հայրենիքներ» խորագրի ներքոյ:

# VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու  
Տպագրութեան  
եւ Հին Գիրքերու  
Նորոգութեան

**Vahe Atchabahian**  
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

## Ցաւակցական

Կարապետ ձէրէճեանի մահուան տխուր առիթով (մահացած Լիբանան), «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համաջն հարազատներուն, մերձակորներուն եւ գաղափարի ընկերներուն, մասնաւորաբար՝ Տոթթ. եւ Տիկ. Եղիկ եւ Հուրի ձէրէճեանին:



# Լրացրէ՛ք 2020 թվականի մարդահամարն այսօր:



**9 պարզ հարցերին** պատասխանելու համար ընդամենը մի քանի րոպե հատկացնելը օգնում է որոշել դուլարները, որոնք ֆինանսավորում են կարևոր ծրագրեր առաջիկա 10 տարիների համար:

Մարդահամարը միլիարդավոր դուլարներ մատուցելով օգնում է աջակցել համայնքային գլխավոր ծառայությունների, ներառյալ՝



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՆՆԴԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ




ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ




ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ

Կալիֆորնիացիները կարող են օգնել ամբողջական հաշվարկի իրականացման, մասնակցելով երեք եղանակներից մեկի միջոցով՝



**Առցանց**  
[my2020census.gov](https://my2020census.gov)



**Հեռախոսով**  
**844-330-2020**



**Փոստով**  
Լրացրէ՛ք և վերադարձրէ՛ք ձեր Մարդահամարի ձևաթուղթը:

Բոլոր համայնքները արժանի են իրենց ընտանիքների բարգավաճման և ապահովման հնարավորության:

**Մարդահամարը լրացրէ՛ք 2020 թ. Սեպտեմբերի 30-ից առաջ:**

Ձեր 2020 թ. Մարդահամարի տվյալներն անվտանգ են, պաշտպանված և գաղտնի: